Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ն, լինելով էներգետիկայի ոլորտի առանցքային ընկերություններից մեկը, իր ուրույն տեղն է գրավում Հայաստանի էներգետիկ համակարգում: Մեր բոլոր ջանքերը ուղղված են Ընկերության գործունեության հուսալիության և կայունության ապահովմանը, արտադրական և ֆինանսական ցուցանիշների բարելավմանը: ՀՀ էներգետիկ բնագավառի առաջընթացն ու ձեռքբերումներն ակնառու են, և մենք, անմասն չմնալով, շարունակել ենք հետևողական քայլերը մեր երկրի էներգետիկ անվտանգության ապահովման ուղղությամբ:

2018թ.-ի ընթացքում մեզ հաջողվեց կյանքի կոչել էներգետիկայի ոլորտում ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր՝ General Electric ընկերության հետ համատեղ սկսվեցին և ավարտին հասցվեցին Ընկերության ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի արդիականացման աշխատանքները, 2018թ.-ին հաջողությամբ ավարտին հասցվեցին Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող Երևանի ՋԷԿ-ի 220/110/35կՎ ենթակայանի վերակառուցման աշխատանքները, որոնք մեկնարկել էին դեռևս 2017թ.-ի սկզբին: Այսօր արդեն շվեդական ABB AB և իսպանական COBRA ընկերությունների կողմից ժամանակակից եվրոպական ստանդարտներով կառուցված ենթակայանն ամբողջությամբ գտնվում է լարման տակ, ընթանում է ենթակայանի կարգաբերման և շահագործման ընդունման գործընթացը:

Կարևորելով ռազմավարական և ներդրումային ծրագրերը՝ Ընկերությունը պատրաստ է շարունակել և հաջողությամբ ավարտին հասցնել բոլոր պլանավորված աշխատանքները՝ նվազագույնի հասցնելով ծախսերը և բարձրացնելով աշխատանքի արդյունավետությունը:

Ընկերությունը պահպանում է իր առաքելությունը, որը նպատակաուղղված է արդյունավետ, հուսալի և անխափան աշխատանքի ապահովմանը, ինչպես նաև միտված է գործունեության արդյունավետության բարձրացման ճանապարհով ապահովել երկարատև և համաչափ զարգացում ՀՀ էներգետիկ համակարգում:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ

1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 4

2 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 8

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հասույթ և ինքնարժեք
Էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների և Տրանսգազ ընկերության գծով ծախս
Գնովի էլեկտրական էներգիայի գծով ծախս
Նյութական ծախսեր
Աշխատավարձի գծով ծախս
Մաշվածության գծով ծախս
Նորոգման ծախսեր
Այլ ծախսեր
Հարկեր և պարտադիր այլ վճարներ
Վարկերի տոկոսների մարում
Վարկերի և փոխառությունների շարժը
Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր

3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 40

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

4 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 46

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 48

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

6 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ 58

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ-Ի ԿԱՏԱՐՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

7 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ 62

01

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ կամ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 27.11.1997թ. թիվ 538 որոշման հիման վրա՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 09.12.1997թ. թիվ 192-ԳՄ հրամանով, որպես պետական փակ բաժնետիրական ընկերություն՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով (01Ա-004948 գրանցված 28.05.1997թ.) և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

Ընկերության ընթացիկ կառավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը՝ տնօրենների խորհրդի իրավասության սահմաններում: Ընկերությունը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված արտադրության լիցենզիայի շրջանակներում արտադրում է էլեկտրական և ջերմային էներգիա և շուկայի կանոնների համաձայն մեծածախ շուկայում այն վաճառում ու արտահանում :

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.

- ՀՀ և Իրանի էլեկտրաէներգետիկական համակարգերի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքեր՝ ՀՀ–ում էլեկտրական էներգիայի /հզորության/ արտադրության ռեժիմների բարելավման և ծախսերի նվազեցման նպատակով, որը չի կրում առևտրային բնույթ,
- Իրանի հետ իրականացվում է գազ էլեկտրական էներգիայի դիմաց գործարք, որի շրջանակում Իրանից ստացված 1 խմ բնական գազի դիմաց արտահանվում է 3 կՎտ×ժ էլեկտրական էներգիա: Նշված գործարքի շրջանակներում ստացված բնական գազի մի մասը համապատասխան պայմանագրի հիման վրա հանձնում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Հրազդան 5 կայանին՝ 1խմ գազի դիմաց ստանալով 3.05 կՎտ×ժ էլեկտրական էներգիա, որն արտահանում է Իրան,
- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և Վրաստանի միջազգային էներգետիկ կորպորացիայի միջև կնքված պայմանագրի համաձայն Իրանից ստացված բնական գազի որոշակի մասը արտահանվում է Վրաստան, յուրաքանչյուր 1 խմ գազի դիմաց ստացած 4.5 կՎտ×ժ էլեկտրական էներգիան արտահանում է Իրան՝ գազ էլեկտրաէներգիայի դիմաց գործարքի շրջանակներում:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն իրականացնում է իր գործունեությունը համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված հետևյալ լիցենզիաների՝

- Լիցենզիա N 0350 ՀՇԳՑ էներգաբլոկի համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության,
- Լիցենզիա N 0318 բնական գազի ներկրման,
- Լիցենզիա N 0015 ՀՀ-ում ջերմային էներգիայի փոխադրման գործունեության,
- Լիցենզիա N 0016 ՀՀ-ում ջերմային էներգիայի բաշխման գործունեության,
- Լիցենզիա ԼԷԳ N0002 Վրաստան բնական գազի արտահանման:

Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որի կողմից կարգավորվում են նաև էլեկտրական էներգիայի արտադրության և մատուցած ծառայությունների սակագները:

Ընկերության հին կայանը զբաղեցնում է 59,9 հա մակերեսով հողատարածք, որից 81,771.47 մ2՝ ընդհանուր մակերեսով շենքեր, շինություններ:

ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի ընդհանուր տարածքը կազմում է 12,0 հա մակերեսով հողատարածք, որից 9764.6 մ2՝ ընդհանուր մակերեսով շենքեր, շինություններ:

ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկը կառուցվել է 2010թ.՝ համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորմամբ: Կառուցված է ժամանակակից տեխնոլոգիայով և գործող էլեկտրակայանների համեմատ ունի էլեկտրական և ջերմային էներգիաների բացթողնման վրա վառելիքի տեսակարար ծախսերի ցածր մեծություն, բարձր օգտակար գործողության գործակից, միավոր արտադրանքի համար շրջապատող միջավայր արտանետումների ցածր ցուցանիշներ:

Համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը 2018թ.-ին իրականացված վերազինումից հետո ունի հետևյալ բնութագրերը.

- էլեկտրականի դրվածքային ընդհանուր հզորությունը՝ 228,6 ՄՎտ,
- էլեկտրականի ջերմային հզորությունը՝ 434,9 ԳՋ/ժ:

ՀՇԳՑԷ-ում տեղակայված են.

- մեկ գազատուրբինային տեղակայանք՝ GT 13 E2 MXL 2 տիպի, 165 ՄՎտ դրվածքային հզորությամբ,
- մեկ շոգետուրբինային տեղակայանք՝ Fuji ընկերության, 63.6 ՄՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ և 434,9 ԳՋ/ժ ջերմային էներգիայի առաքմամբ,
- մեկ ջերմության վերականգնիչ շոգեկաթսա՝ "Nooter Ericsen/SEC" ընկերության արտադրության:

Կայանի ջրամատակարարումն իրականացվում է «Արարատյան» ջրատարով՝ Երևան քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգից: «Արարատյան» խմելու որակի ջուրն օգտագործվում է քիմիապես աղազրկված ջուր ստանալու համար, որը ծախսվում է արդյունաբերությանը մատակարարվող շոգու և ներկայանային կորուստները լրացնելու համար: Այն, մտնելով քիմիական արտադրամաս, մշակվում և աղազրկվում է հակադարձ օսմոս և անիոնիտային ու կատիոնային ֆիլտրերում ու տրվում կաթսատուրբինային արտադրամասի գազազերծիչ: «Արարատյան» խմելու որակի ջուրը օգտագործվում է նաև ջեռուցման ջրային ցանցերը ենթասնելու նպատակով:

Քիմիական արտադրամասի ֆիլտրերի նյութերի վերականգնման ժամանակ առաջացած, ինչպես նաև հովացման համակարգի արտափչումից առաջացած կեղտաջրերը մինչև հեռացվելը մշակվում են չեզոքացման բաքում, այնուհետև թափվում են Հրազդան գետ, իսկ խմելու ջրի համակարգում առաջացած կեղտաջրերը մշակումից հետո լցվում են քաղաքային կոյուղի:

ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկում որպես վառելիք օգտագործվում է բնական գազ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված սակագները հետևյալն են՝

Առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը *(առանց ԱԱՀ)*

Կիրառման ամսաթիվ	դրամ/կՎտxժ
01.02.2017թ	15.459
01.02.2018թ	20.284

Հզորության տրամադրման սակագին *(առանց ԱԱՀ)*

Կիրառման ամսաթիվ	դրամ/կՎտ
01.02.2017թ	5102.30
01.02.2018թ	4950.62

ՀՀ պետական մարմինների և էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի սպառողների միջև փոխհարաբերությունները կարգավորվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրականացնում է էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծություն և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը: Այն հանդիսանում է նաև սույն տարեկան հաշվետվության ներկայացման արժույթ՝ հազ. դրամ ճշտությամբ: Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը:



ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Ընկերության միակ բաժնետերը հաշվետու ամսաթվին և նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն է:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2018թ. դրությամբ կազմել է 1,852,614 հազ. դրամ: Այն բաղկացած է 2,273,147 հատ հասարակ բաժնետոմսերից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 815 դրամ:[1]

[1] ՀՀ Կառավարության N884-Ա որոշմամբ՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ կանոնադրական կապիտալը նվազեցվել է 8,572,037,337 դրամի չափով

02

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հ/Հ	Ցուցանիշներ		Չ/Մ	2018թ		2017թ
				Նախատեսված	փաստացի	փաստացի
1	2		3	4	6	6
1	Արտադրանք		հազ. կՎտxժ	1,504,310	1,431,403	1,543,598
2	Օգտակար առաքում		հազ. կՎտxժ	1,455,870	1,384,052	1,493,063
3	Սեփական կարիքների ծախս (ներառյալ ուժային տրանսֆորմատորների կորուստը)		հազ. կՎտxժ	48,440	47,351	50,535
	3.1	Նույնը տոկոսներով	տոկոս	3,22	3,31	3,27
4	Պատվիրված հզորություն		հազ. կՎտ	2,245	2,164	2,495
5	Սեփական արտադրանքից ՀԷՑ-ին առաքվող էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	1,193,900	966,088	804,918
6	ԻԻՀ-ից ներկրված բնական գազ		հազ. խմ	365,000	515,962	376,955
7	ԻԻՀ արտահանված էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	1,114,250	1,539,554	1,224,336
	7.1	ԻԻՀ արտահանում գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում	հազ. կՎտxժ	1,114,250	1,538,250	1,224,336
	7.2	ԻԻՀ արտահանում փոխհոսքի գործառույթի շրջանակներում	հազ. կՎտxժ	-	1,304	-
8	ԻԻՀ-ից ներկրված էլեկտրաէներգիան փոխհոսքերի գործարքի շրջանակներում		հազ. կՎտxժ	-	24,398	75,101
9	Բնական գազի իրացում Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին		հազ. խմ	260,616	355,973	147,443
10	Վրաստան արտահանված բնական գազ		հազ. խմ	-	15,065	-
11	Վրաստանից ներմուծված էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	-	63,819	-
12	Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած էլեկտրաէներգիա՝ (Հրազդան 5)		հազ. կՎտxժ	857,340	1,090,406	549,435
13	Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած բնական գազ (գազ-գազ)		հազ. խմ	-	-	53,187
14	Գազպրոմ Արմենիային իրացրած բնական գազ՝ (գազ-գազ)		հազ. խմ	-	-	53,187
15	Գազպրոմ Արմենիայից գնված բնական գազ (Երևանի ԳԳՄ)		հազ. խմ	232,147	163,210	104,056

Հ/Հ	Ցուցանիշներ		Չ/Մ	2018թ.-ի տարբերություն /7=5-4/	2017-2018թթ. տարբերություն /8=5-6/
1	2		3	7	8
1	Արտադրանք		հազ. կՎտxժ	(72,907)	(112,195)
2	Օգտակար առաքում		հազ. կՎտxժ	(71,818)	(109,011)
3	Սեփական կարիքների ծախս (ներառյալ ուժային տրանսֆորմատորների կորուստը)		հազ. կՎտxժ	(1,089)	(3,184)
	3.1	Նույնը տոկոսներով	տոկոս	-	-
4	Պատվիրված հզորություն		հազ. կՎտ	(82)	(331)
5	Սեփական արտադրանքից ՀԷՑ-ին առաքվող էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	(227,812)	161,170
6	ԻԻՀ-ից ներկրված բնական գազ		հազ. խմ	150,962	139,007
7	ԻԻՀ արտահանված էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	425,304	315,218
	7.1	ԻԻՀ արտահանում գազ-էլեկտրաէներգիա գործառույթի շրջանակներում	հազ. կՎտxժ	424,000	313,914
	7.2	ԻԻՀ արտահանում փոխհոսքի գործառույթի շրջանակներում	հազ. կՎտxժ	1,304	1,304
8	ԻԻՀ-ից ներկրված էլեկտրաէներգիան փոխհոսքերի գործարքի շրջանակներում		հազ. կՎտxժ	24,398	(50,703)
9	Բնական գազի իրացում Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին		հազ. խմ	95,358	208,531
10	Վրաստան արտահանված բնական գազ		հազ. խմ	15,065	15,065
11	Վրաստանից ներմուծված էլեկտրաէներգիա		հազ. կՎտxժ	63,819	63,819
12	Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած էլեկտրաէներգիա՝ (Հրազդան 5)		հազ. կՎտxժ	233,066	540,971
13	Գազպրոմ Արմենիայից ձեռք բերած բնական գազ (գազ-գազ)		հազ. խմ	-	(53,187)
14	Գազպրոմ Արմենիային իրացրած բնական գազ՝ (գազ-գազ)		հազ. խմ	-	(53,187)
15	Գազպրոմ Արմենիայից գնված բնական գազ (Երևանի ԳԳՄ)		հազ. խմ	(68,937)	59,153

Ընկերության ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկում 2018թ.-ին փաստացի արտադրվել է 1,431,403 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, ինչը 72,907 հազ. կՎտԺ-ով պակաս է 2018թ.-ի համար ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի արտադրության, առաքման և ներքին շուկա մուտք գործող էլեկտրական էներգիայի կանխատեսվող հաշվեկշռով /այսուհետ՝ Հաշվեկշիռ/[2] նախատեսված 1,504,310 հազ. կՎտԺ արտադրանքի ծավալից և 112,195 հազ. կՎտԺ-ով 2017թ.-ին փաստացի արտադրած 1,543,598 հազ կՎտԺ էլեկտրական էներգիայի ծավալից: 2018թ.-ին Ընկերությունը 72,907 կՎտԺ-ով քիչ է արտադրել, որը պայմանավորված է 2018թ.-ին Ընկերությունում իրականացված կապիտալ վերանորոգման ժամկետների երկարաձգման հանգամանքով պայմանավորված՝ էներգաբլոկի կանգառը նախատեսված 58 օրից փաստացի կազմել է 69 օր:

2018թ.-ին Ընկերության սեփական կարիքների համար օգտագործվել է 47,351 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա / կամ լրիվ արտադրանքի շուրջ 3,31 տոկոսը/, ինչը պակաս է էլեկտրական էներգիայի կանխատեսվող հաշվեկշռով պլանավորվածից 1,089 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայով և 3,184 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայով ավել է 2017թ.-ի փաստացի ծախսվածից:

2018թ.-ին օգտակար առաքումը կազմել է 1,384,052 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, որը 71,818 հազ. կՎտԺ-ով պակաս է եղել 2018թ.-ի համար Հաշվեկշռով նախատեսված օգտակար առաքումից և 109,011 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայով ավել է 2017թ.-ի փաստացիից:

2018թ.-ին պայմանագրային հզորությունը փաստացի կազմել է 2,164 հազ կՎտ, այն 2018թ.-ի նախատեսված հզորությունից պակաս է 82 հազ կՎտ-ով և 331 հազ կՎտ-ով 2017թ.-ի փաստացիից: Կապիտալ վերանորոգումից հետո ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկում պայմանագրային հզորությունը 220 հազ կՎտ-ից կազմել է 228.6 հազ կՎտ (նախատեսված 227 հազ. կՎտ):

Ընկերությունը Իրանի գազի ազգային ընկերությունից (National Iranian Gas Company) ներկրում է իրանական բնական գազ, որի մի մասը Իրան-ՀՀ պետական սահմանին հանձնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին, իսկ մնացած մասը օգտագործում սեփական արտադրությունում:

2018թ.-ին ներմուծվել է 515,962 հազ. խմ իրանական բնական գազ, որն 2018թ.-ի նախատեսված քանակից ավել է 150,962 հազ. խմ-ով և 139,007 հազ. խմ-ով 2017թ.-ին փաստացի ներմուծված քանակից, ինչը պայմանավորված է 2018թ.-ի մայիս ամսից իրանական բնական գազի ծավալների ավելացմամբ:

Իրանից ներմուծված գազի դիմաց Ընկերությունը պարտավորվում է Իրան հանդիպակաց արտահանել էլեկտրական էներգիա 1:3 հարաբերությամբ[3]: Իսկ Թավանիր Ընկերության հետ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի պայմանագրի շրջանակներում իրականացվում է փոխհոսքերի գործարքը, որի շրջանակում 2018թ.-ին փաստացի ներմուծվել է 24,398 կՎտԺ էլեկտրական էներգիա /որն իրացվել է ներքին շուկա՝ «ՀԷՑ» ՓԲԸ/: 2017թ-ի ընթացքում Իրանից փաստացի ներմուծված 75,101 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայի դիմաց արտահանում չի կատարվել՝ ՀԾԿՀ-ի 09.08.2017թ N344-Ն որոշմամբ

[2] ՀՀ ՀԾԿՀ թիվ 581-Ն որոշում առ 27.12.2017թ.
[3] 1 խմ բնական գազ - 3 կՎտԺ էլեկտրաէներգիա

հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 135-րդ կետի պահանջի չբավարարման պատճառով, իսկ 2018թ.-ին ներմուծված փոխհոսքի դիմաց Ընկերությունը Իրան արտահանել է ընդամենը 1,304 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, արդյունքում Թավանիր Ընկերությանը պարտքը 2018թ.-ի տարեվերջին 69,514 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայից դարձել է 92,597 հազ. կՎտԺ: 2018թ.-ին Ընկերությունը սեփական արտադրանքից փաստացի «ՀԷՑ» ՓԲԸ-ին իրացրել է 966,088 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, որը 227,812 հազ. կՎտԺ-ով քիչ է հաշվեկշռով նախատեսվածից:

2018թ.-ին Ընկերությունը Իրան արտահանել է 1,538,250 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, որը 313,914 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայով ավել է 2017թ.-ի փաստացի արտահանված 1,224,336 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայից: Ըստ 2018-2019թթ. Հաշվեկշռի 2018թ.-ի ընթացքում Իրան պլանավորած էր արտահանել 1,114,250 հազ կՎտԺ էլեկտրական էներգիա[4], սակայն, վերանայված էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմներով պայմանավորված, փաստացի ավել է արտահանվել 424,000 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա: 2018թ.-ին 1,538,250 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա Իրան արտահանվել է գազ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքի շրջանակներում և 1,304 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիան՝ փոխհոսքի գործարքի շրջանակներում, իսկ 2017թ.-ին՝ Իրան արտահանված 1,224,336 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիան արտահանվել է միայն գազ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքի շրջանակներում:

Իրանից ներմուծված բնական գազից որոշակի քանակ Ընկերությունը իրացնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին[5]՝ Իրան-ՀՀ պետական սահմանին: Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանն իր հերթին գնված բնական գազի դիմաց պարտավորվում է Ընկերությանը տրամադրել էլեկտրական էներգիա 1:3.05 հարաբերակցությամբ[6] /տես գծապատկեր 2-ում/: Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից ձեռքբերված էլեկտրական էներգիան Ընկերությունը բացառապես պետք է արտահանի Իրան: 2018թ.-ին բնական գազի դիմաց Իրան արտահանված 1,538,250 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայից /2017թ.-ի հետ համեմատ 313,914 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիայով ավել/ 1,090,406 հազ. ԿՎտԺ էլեկտրական էներգիան ձեռք է բերվել Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից, մնացած 449,148 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիան՝ սեփական արտադրանքից: 2018թ.-ի համար Ընկերությունը՝ համաձայն Հաշվեկշռի Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից պետք է ձեռք բերեր շուրջ 857,340 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, սակայն 233,066 հազ. կՎտԺ-ով ավել է ձեռք բերել, փաստացի արտահանելով 1,090,406 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, իսկ Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ն Իրան պետք է արտահաներ 256,910 հազ. կՎտԺ էլեկտրական էներգիա, սակայն 192,238 հազ. կՎտԺ-ով ավել է արտահանել, ինչով էլ պայմանավորված գազ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքի շրջանակում Իրան 2018թ.-ին ավել է արտահանվել 425,304 հազ. կՎտԺ:

[4] 1000 կվտԺ էլեկտրաէներգիան 50 ԱՄՆ դոլար սակագնով
[5] 2011 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված Բնական գազի և էլեկտրաէներգիայի փոխանակության (առուվաճառքի) մասին պայմանագրի շրջանակներում
[6] 1 խմ բնական գազ – 3.05 կՎտԺ էլեկտրաէներգիա հարաբերակցությամբ

2018թ.-ին Ընկերությունը Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին հանձնել է 355,973 հազ. խմ իրանական բնական գազ, որը 208,531 հազ. խմ բնական գազով պակաս է 2017թ.-ի ընթացքում փաստացի հանձնած 147,443 հազ. խմ բնական գազից: 2018թ.-ի համար Ընկերությունը պետք է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին հանձներ 260,616 հազ խմ իրանական բնական գազ, սակայն, պայմանավորված Իրանից ավել ներմուծված բնական գազի քանակով, ինչպես նաև Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանից 233,066 հազ. կՎտxժ ավել արտահանված էլեկտրական էներգիայով, Ընկերությունը հնարավորություն է ունեցել 2018թ.-ին նախատեսվածի համեմատ փաստացի 95,358 հազ. խմ-ով ավել բնական գազ իրացնել Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին՝ մարելով նաև տարեսկզբի 6,654 խմ բնական գազի պարտքը: Այսպիսով 2018թ.-ի ընթացքում Իրանից փաստացի ներմուծված 515,962 հազ. խմ բնական գազից 355,973 հազ. խմ-ը հանձնել է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին:

Ընկերությունը 2018թ.-ին 68,937 հազ. խմ ռուսական բնական գազ պակաս է ձեռք բերել Երևանի ԳԳՄ-ից, պայմանավորված ՀԷՑ ՓԲԸ-ին հաշվեկշռով նախատեսվածից 227,802 հազ. կՎտxժ-ով պակաս էլեկտրական էներգիայի իրացմամբ, ինչպես նաև կայանի վերանորոգումից հետո վառելիքի տեսակարար ծախսի կրճատմամբ: 2018թ.-ին ձեռք է բերել 163,210 հազ. խմ ռուսական բնական գազ, որը 2017թ.-ի փաստացի ձեռք բերված 104,056 հազ. խմ բնակvան գազից 59,153 հազ. խմ-ով ավել է:

Ընկերությունը Վրաստանի ՎՄԷԿ ընկերության հետ 2012թ.-ին կնքված էլեկտրական էներգիայի և բնական գազի փոխանակման (առուվաճառքի) պայմանագրի շրջանակներում Վրաստան է արտահանել իրանական բնական գազ, որի դիմաց Վրաստանից ներմուծել է էլեկտրական էներգիա[7]: 2018թ.-ին Ընկերությունը նշյալ պայմանագրի շրջանակներում Վրաստան է արտահանել 15,065 հազ. խմ իրանական բնական գազ, միաժամանակ մարելով նախկին 883 հազ. խմ բնական գազի պարտքը, որի դիմաց ներմուծել է 63,819 հազ. կՎտxժ էլեկտրական էներգիա:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ



	ԼՐԻՎ ԱՐՏԱԴՐԱՆՔ	ՕԳՏԱԿԱՐ ԱՐՏԱԴՐԱՆՔ	ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԾԱԽՍ	ՊԱՏՎԻՐՎԱԾ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ	ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԻՐԱՑՈՒՄ ՀՀ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱ
2017թ. ՓԱՍՏԱՑԻ	1 543 598	1 493 063	50 535	2 495	880 018
2018թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ	1 504 310	1 455 870	48 440	2 245	1 193 900
2018թ. ՓԱՍՏԱՑԻ	1 431 403	1 384 052	47 351	2 164	990 486

[7] 1 խմ իրանական բնական գազ – 4.5 կՎտժ էլեկտրական էներգիա հարաբերակցությամբ



	ՀԻՀ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ /ԳԱԶ-ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ	ՀԻՀ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՓՈԽՀՈՍՔԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	ՀՀՀ-ԻՑ ՆԵՐԿՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ/ ՓՈԽՀՈՍՔԵՐ	ՎՐԱՍՏԱՆԻՑ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ՝ (ՀՐԱԶԴԱՆ 5)
2017թ. ՓԱՍՏԱՑԻ	1 224 336	-	75 101	-	549 435
2018թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ	1 114 250	-	-	-	857 340
2018թ. ՓԱՍՏԱՑԻ	1 538 250	1 304	24 398	63 819	1 090 406

ԲՆԱԿԱՆ ԳԱԶ



	ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԻՐԱՑՈՒՄ ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՀՐԱԶԴԱՆ 5 ԿԱՅԱՆԻՑ	ՎՐԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳԱԶ ԳԱԶ-ԳԱԶ	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻՑ ԳՆՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ ԵՐԵՎԱՆԻ ԳԳՄ	ՀՀՀ-ԻՑ ՆԵՐԿՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ
2017թ. ՓԱՍՏԱՑԻ	147 443	-	53 187	104 056	376 955
2018թ. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ	260 616	-	-	232 147	365 000
2018թ. ՓԱՍՏԱՑԻ	355 973	15 065	-	163 210	515 962

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		2018 թ		2017թ.
			պլանային	փաստացի	փաստացի
1	2		3	4	5
I	Ընդամենը եկամուտներ, այդ թվում		81,416,456.56	96,584,175.61	73,170,502.25
1	էլեկտրաէներգիայի իրացումից եկամուտ, այդ թվում		34,713,858.45	30,183,741.89	26,605,676.39
	1.1	էլեկտրաէներգիայի օգտակար առաքում ներքին շուկա	23,564,890.56	19,439,067.29	13,963,047.87
	1.2	Հզորության տրամադրում	11,148,967.89	10,744,674.60	12,642,628.53
2	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին բնական գազի իրացումից հասույթ		18,934,023.30	25,760,571.26	10,673,360.19
3	Գազ-Գազ պայմանագրի շրջանակում բնական գազի իրացումից հասույթ		-	-	3,864,004.17
4	ԻԻՀ էլեկտրական էներգիայի իրացումից հասույթ		26,985,705.81	37,203,021.58	29,754,827.47
5	Վրաստանի Հանրապետություն բնական գազի իրացումից հասույթ		-	1,090,916.91	-
6	Գործառնական այլ եկամուտներ		9,869.00	1,406,680.29	920,607.76
	6.1	Ծառայությունների մատուցումից եկամուտ	9,869.00	2,164.64	7,098.09
	6.2	Այլ պաշարների վաճառքից եկամուտ	-	-	863,049.31
	6.3	Արտարժույթի փոխարկումից եկամուտներ		520.32	1,668.74
	6.4	Ակտիվներին վերաբերող շնորհներ/զուտ/	-	562,767.55	7,048.61
	6.5	Այլ եկամուտներ	-	841,227.78	41,743.01
7	Ֆինանսական եկամուտ		773,000.00	574,457.70	348,910.00
8	Ոչ գործառնական այլ եկամուտներ, այդ թվում		-	364,785.97	1,003,116.27
	8.1	Հիմնական միջոցների վաճառքներից եկամուտներ	-	1,491.67	246,083.42
	8.2	Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ	-	363,294.31	757,032.85

հազ. դրամ

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		տարբերություն /6=4-3/	տարբերություն /7=4-5/
1	2		6	7
I	Ընդամենը եկամուտներ, այդ թվում		15,167,719.06	23,413,673.36
1	էլեկտրաէներգիայի իրացումից եկամուտ, այդ թվում		(4,530,116.56)	3,578,065.49
	1.1	էլեկտրաէներգիայի օգտակար առաքում ներքին շուկա	(4,125,823.27)	5,476,019.42
	1.2	Հզորության տրամադրում	(404,293.29)	(1,897,953.93)
2	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին բնական գազի իրացումից հասույթ		6,826,547.96	15,087,211.08
3	Գազ-Գազ պայմանագրի շրջանակում բնական գազի իրացումից հասույթ		-	(3,864,004.17)
4	ԻԻՀ էլեկտրական էներգիայի իրացումից հասույթ		10,217,315.77	7,448,194.11
5	Վրաստանի Հանրապետություն բնական գազի իրացումից հասույթ		1,090,916.91	1,090,916.91
6	Գործառնական այլ եկամուտներ		1,396,811.29	486,072.53
	6.1	Ծառայությունների մատուցումից եկամուտ	(7,704.36)	(4,933.45)
	6.2	Այլ պաշարների վաճառքից եկամուտ	-	(863,049.31)
	6.3	Արտարժույթի փոխարկումից եկամուտներ		(1,148.42)
	6.4	Ակտիվներին վերաբերող շնորհներ/զուտ/	562,767.55	555,718.94
	6.5	Այլ եկամուտներ	841,227.78	799,484.77
7	Ֆինանսական եկամուտ		(198,542.30)	225,547.70
8	Ոչ գործառնական այլ եկամուտներ, այդ թվում		364,785.97	(638,330.30)
	8.1	Հիմնական միջոցների վաճառքներից եկամուտներ	1,491.67	(244,591.75)
	8.2	Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ	363,294.31	(393,738.54)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		2018թ.		2017թ.
			պլանային	փաստացի	փաստացի
1	2		3	4	5
II	Ընդամենը ծախսեր, այդ թվում		79,677,012.60	96,543,315.96	80,293,823.43
9	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից ձեռքբերված բնական գազի գծով ծախս		22,674,364.37	15,886,840.83	10,122,840.24
10	Ձեռք բերվող բնական գազ/Գազ-գազ/		-	-	3,886,212.53
11	Տեղափոխված բնական գազի գծով ծախս		956,029.60	1,464,686.00	2,101,166.25
12	ԻԻՀ-ից փոխհոսքերի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի գծով ծախս		-	830,073.61	-
13	Վրաստանի Հանրապետությունից ձեռքբերված էլեկտրական էներգիայի գծով ծախս		-	1,027,722.43	-
14	էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների գծով ծախս, այդ թվում		1,646,758.41	2,317,576.00	2,569,355.98
	14.1	«ԲԷՑ» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	1,328,172.76	1,877,003.00	2,207,503.90
	14.2	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	46,415.69	65,672.00	79,944.14
	14.3	«Է.Է.Հ.Օ» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	272,169.95	374,901.00	281,907.94
15	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Հրազդան-5 կայանից գնված էլեկտրական էներգիայի ինքնարժեք		18,286,581.00	23,617,936.46	11,911,896.30
16	ԻԻՀ-ից ձեռք բերված գազի գծով ծախս		26,519,257.50	37,428,166.98	27,631,656.95
17	Սեփական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի գծով ծախս		45,740.40	80,113.00	35,384.23
18	Նյութական ծախսեր, այդ թվում		806,886.34	568,864.87	808,881.39
	18.1	Ջուր	333,494.10	291,521.70	296,574.44
	18.2	Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր	40,112.89	43,454.06	48,806.87
	18.3	Պահեստամասեր	168,242.50	74,346.05	245,404.81
	18.4	Հումք նյութեր	265,036.84	136,567.60	175,642.54
	18.5	Այլ նյութեր	-	18,711.05	31,042.73
	18.6	Նյութական այլ ծախսեր	-	4,264.42	11,410.00
19	Մաշվածություն		3,504,900.00	6,821,311.65	4,079,967.00
20	Նորոգման ծախսեր		2,781,555.83	19,258.53	66,485.95
21	Աշխատավարձի գծով ծախս		758,900.00	754,313.80	696,191.92

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		տարբերություն /6=4-3/	տարբերություն /7=4-5/
1	2		6	7
II	Ընդամենը ծախսեր, այդ թվում		16,866,303.36	16,249,492.53
9	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից ձեռքբերված բնական գազի գծով ծախս		(6,787,523.53)	5,764,000.60
10	Ձեռք բերվող բնական գազ/Գազ-գազ/		-	(3,886,212.53)
11	Տեղափոխված բնական գազի գծով ծախս		508,656.40	(636,480.25)
12	ԻԻՀ-ից փոխհոսքերի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի գծով ծախս		830,073.61	830,073.61
13	Վրաստանի Հանրապետությունից ձեռքբերված էլեկտրական էներգիայի գծով ծախս		1,027,722.43	1,027,722.43
14	էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների գծով ծախս, այդ թվում		670,817.59	(251,779.98)
	14.1	«ԲԷՑ» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	548,830.24	(330,500.90)
	14.2	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	(206,497.95)	(216,235.94)
	14.3	«Է.Է.Հ.Օ» ՓԲԸ-ի մատուցած ծառայություններ	328,485.31	294,956.86
15	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Հրազդան-5 կայանից գնված էլեկտրական էներգիայի ինքնարժեք		5,331,355.46	11,706,040.16
16	ԻԻՀ-ից ձեռք բերված գազի գծով ծախս		10,908,909.48	9,796,510.03
17	Սեփական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի գծով ծախս		34,372.60	44,728.76
18	Նյութական ծախսեր, այդ թվում		(238,021.46)	(240,016.52)
	18.1	Ջուր	(41,972.40)	(5,052.74)
	18.2	Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր	3,341.17	(5,352.82)
	18.3	Պահեստամասեր	(93,896.45)	(171,058.76)
	18.4	Հումք նյութեր	(128,469.24)	(39,074.94)
	18.5	Այլ նյութեր	18,711.05	(12,331.68)
	18.6	Նյութական այլ ծախսեր	4,264.42	(7,145.58)
19	Մաշվածություն		3,316,411.65	2,741,344.65
20	Նորոգման ծախսեր		(2,762,297.30)	(47,227.42)
21	Աշխատավարձի գծով ծախս		(4,586.20)	58,121.88

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		2018թ.		2017թ.
			պլանային	փաստացի	փաստացի
1	2		3	4	5
22	Այլ ծախսեր, այդ թվում		355,930.00	304,446.41	318,925.75
	22.1	Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	19,300.00	21,850.51	12,010.00
	22.2	Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	13,000.00	5,584.41	18,080.00
	22.3	Աուդիտորական ծառայություններ	8,010.00	9,572.58	43,084.83
	22.4	Բանկային ծախսեր	16,470.00	2,963.60	3,109.00
	22.5	Պայմանագրային աշխատանքներ	246,130.00	253,057.26	91,752.92
	22.6	Չնախատեսված այլ ծախսեր	53,020.00	11,418.05	150,889.00
23	Էներգակարգաբերման հետ կապված ծախսեր		35,938.00	42,647.26	44,569.00
24	Հարկեր և պարտադիր այլ վճարներ, այդ թվում		94,016.39	116,124.50	105,437.33
	24.1	Չփոխհատուցվող հարկեր	14,727.39	20,532.00	20,830.64
	24.2	Կարգավորման պարտադիր վճարներ	48,575.00	49,737.50	54,370.69
	24.3	Լիցենզիոն տարեկան տուրք	30,714.00	45,855.00	30,236.00
25	Վարկերի տոկոսների մարում		1,210,154.77	1,114,075.10	1,221,844.00
26	Գործառնական այլ ծախսեր, այդ թվում		-	799,430.78	1,286,876.98
	26.1	Տույժեր և տուգանքներ	-	376.76	305,250.48
	26.2	Պաշարների օտարումից ծախսեր	-	710,446.94	905,218.33
	26.3	Արտարժույթի փոխարկումից ծախս	-	38,972.43	13,861.00
	26.4	Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	-	38,499.01	-
	26.5	Արժեքների պակասորդից փչացումից կորուստ	-	11,135.65	-
	26.6	Նախորդ տար.գործ.գործուն. ծախսեր(էական սխ.ուղղ.արդ.)	-	-	62,547.17
27	Ոչ գործառնական այլ ծախսեր, այդ թվում		-	60,321.21	8,730,910.68
	27.1	Հիմնական միջոցների լուծարումից ծախսեր	-	-	9,570.17
	27.2	Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	-	739.21	177,695.51
	27.3	Ֆինանսական ակտիվների արժեզրկում	-	59,582.00	8,457,039.00
	27.4	Հիմնական միջոցների արժեզրկում	-	-	86,606.00
28	Փոխարժեքային տարբերությունից առաջացած ծախսեր		-	2,270,404.52	4,612,673.78
29	Հետաձգված հարկի գծով փոխհատուցում		-	1,019,002.00	706,234.00
III	Գործառնական գործունեության արդյունք		1,739,443.96	40,859.65	7,123,321.18

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը		տարբերություն /6=4-3/	տարբերություն /7=4-5/
1	2		6	7
22	Այլ ծախսեր, այդ թվում		(51,483.59)	(14,479.34)
	22.1	Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,550.51	9,840.51
	22.2	Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(7,415.59)	(12,495.59)
	22.3	Աուդիտորական ծառայություններ	1,562.58	(33,512.25)
	22.4	Բանկային ծախսեր	(13,506.40)	(145.40)
	22.5	Պայմանագրային աշխատանքներ	6,927.26	161,304.35
	22.6	Չնախատեսված այլ ծախսեր	(41,601.95)	(139,470.95)
23	Էներգակարգաբերման հետ կապված ծախսեր		6,709.26	(1,921.74)
24	Հարկեր և պարտադիր այլ վճարներ, այդ թվում		22,108.11	10,687.17
	24.1	Չփոխհատուցվող հարկեր	5,804.61	(298.64)
	24.2	Կարգավորման պարտադիր վճարներ	1,162.50	(4,633.19)
	24.3	Լիցենզիոն տարեկան տուրք	15,141.00	15,619.00
25	Վարկերի տոկոսների մարում		(96,079.67)	(107,768.90)
26	Գործառնական այլ ծախսեր, այդ թվում		799,430.78	(487,446.19)
	26.1	Տույժեր և տուգանքներ	376.76	(304,873.73)
	26.2	Պաշարների օտարումից ծախսեր	710,446.94	(194,771.39)
	26.3	Արտարժույթի փոխարկումից ծախս	38,972.43	25,111.43
	26.4	Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	38,499.01	38,499.01
	26.5	Արժեքների պակասորդից փչացումից կորուստ	11,135.65	11,135.65
	26.6	Նախորդ տար.գործ.գործուն. ծախսեր(էական սխ.ուղղ.արդ.)	-	(62,547.17)
27	Ոչ գործառնական այլ ծախսեր, այդ թվում		60,321.21	(8,670,589.47)
	27.1	Հիմնական միջոցների լուծարումից ծախսեր	-	(9,570.17)
	27.2	Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	739.21	(176,956.30)
	27.3	Ֆինանսական ակտիվների արժեզրկում	59,582.00	(8,397,457.00)
	27.4	Հիմնական միջոցների արժեզրկում	-	(86,606.00)
28	Փոխարժեքային տարբերությունից առաջացած ծախսեր		2,270,404.52	(2,342,269.26)
29	Հետաձգված հարկի գծով փոխհատուցում		1,019,002.00	312,768.00
III	Գործառնական գործունեության արդյունք			

ՀԱՍՈՒՅԹ ԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔ

2018թ.-ին ՀԷՑ ՓԲԸ-ին էլեկտրական էներգիայի իրացումից /ներառյալ փոխհոսքերը/ հասույթը կազմել է 19,439,067 հազ. դրամ, պատվիրված հզորությունից՝ 10,744,675 հազ. դրամ, իսկ իրացված էլեկտրական էներգիայի ինքնարժեքը /ներառյալ փոխհոսքերը/ կազմել է 23,301,965 հազ. դրամ: Այսպիսով 2018թ.-ին Ընկերությունը էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից ունեցել է 6,881,777 հազ. դրամի եկամուտ, որը 854,701 հազ. դրամով ավելին է 2017թ.-ի համեմատ:

Փոխհոսքեր գործարքի շրջանակներում Ընկերությունը 2018թ.-ին ստացել է 494,898 հազ. դրամ հասույթ, ներմուծված էլեկտրաէներգիայի ինքնարժեքը կազմել է 500,503 հազ. դրամ: Այսինքն այս գործարքի մասով Ընկերության վնասը կազմել է 5,605 հազ. դրամ, որը 2,161 հազ. դրամով պակաս է 2017թ.-ի համեմատ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1	2018թ		2017թ.	
	Հասույթ	Ինքնարժեք	Հասույթ	Ինքնարժեք
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
էլեկտրաէներգիայի վաճառք, հզորության տրամադրում ՀԷՑ-ին.	30,183,742	23,301,965	26,605,677	20,578,601
Սեփական արտադրությունից	18,944,170	22,801,462	12,782,797	19,390,584
էլեկտրական էներգիայի փոխհոսքեր	494,898	500,503	1,180,251	1,188,017
Հզորության տրամադրում	10,744,675	-	12,642,629	-

Ընկերությունը գազ էլեկտրաէներգիայի դիմաց, գործարքի շրջանակներում 2018թ.-ին ունեցել է 37,203,022 հազ. դրամի հասույթ, որը 7,448,195 հազ. դրամով ավել է 2017թ.-ի այս գործարքի գծով ստացված 29,754,827 հազ. դրամի հասույթից: 2018թ.-ին Ընկերությունը Իրան գազ էլեկտրաէներգիայի դիմաց գործարքի շրջանակում ավել է արտահանել 313,914 հազ. կՎտxժ էլեկտրական էներգիա, ինչը պայմանավորված է Իրանից 2018թ.-ին մայիս-դեկտեմբեր ամիսներին նախատեսված քանակից 150,962 հազ. խմ ավել իրանական բնական գազի ներկրմամբ:[8] Այս գործարքի շրջանակներում Ընկերությունը 2018թ.-ին ունեցել է 588,335 հազ. դրամի եկամուտ, որը 677,302 հազ. դրամով պակաս է 2017թ.-ի համեմատ:

ԱՂՅՈՒՍԱԿ 2	2018թ.		2017թ.	
	Հասույթ	Ինքնարժեք	Հասույթ	Ինքնարժեք
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
էլեկտրաէներգիայի վաճառք (արտահանում).	37,203,022	36,614,687	29,754,827	28,489,190
Սեփական արտադրությունից	9,906,491	9,864,737	16,495,057	16,577,524
Գազպրոմ Արմենիա Հրազդան 5 կայան (16.12.11թ. պայմանագիր)	25,758,104	25,271,276	13,259,770	11,911,666
Վրաստան գազ էլեկտրաէներգիա փոխանակում (25.04.2012թ. պայմանագիր)	1,511,980	1,116,602	-	-
էլեկտրական էներգիայի փոխհոսքեր	26,447	362,071	-	-

[8] Պայմանավորված Համակարգի օպերատորի առ 29.01.2018թ.-ի վերափոխված հաշվեկշռով

2018թ.-ին Ընկերությունը Իրան-ՀՀ սահմանին 16.12.2011թ. պայմանագրի շրջանակներում Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին է հանձնել 355,973 խմ իրանական բնական գազ, որն ապահովել է 25,760,571 հազ. դրամի հասույթ, իսկ ինքնարժեքը կազմել է 25,828,276 հազ. դրամ: Ամփոփելով կարող ենք փաստել, որ այս գործարքի շրջանակում Ընկերությունը 2018թ.-ին կրել է 67,705 հազ. դրամի վնաս, իսկ 2017թ.-ին վնասը կազմել է 85,680 հազ. դրամ:

ԱՂՅՈՒՍԱԿ 3	2018թ.		2017թ.	
	Հասույթ	Ինքնարժեք	Հասույթ	Ինքնարժեք
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Բնական գազի վաճառք.	25,760,571	25,828,276	14,537,364	14,623,044
Գազպրոմ Արմենիա Հրազդան 5 կայան (16.12.11թ. պայմանագիր)	25,760,571	25,828,276	10,673,360	10,681,296
Գազպրոմ Արմենիա (18.10.10թ. պայմանագիր)	-	-	3,864,004	3,941,748

Վրաստանի ՎՄԷԿ ընկերության հետ 2012թ.-ին կնքված էլեկտրական էներգիայի և բնական գազի փոխանակման (առուվաճառքի) պայմանագրի շրջանակներում Ընկերությունը Վրաստան արտահանած իրանական բնական գազի իրացումից հասույթը եղել է 1,090,917 հազ. դրամի, իսկ ինքնարժեքը կազմել է 1,320,478 հազ. դրամ: Ընկերությունը արտահանված իրանական բնական գազին համամասնորեն[9] ՎՄԷԿ ընկերությունից ներմուծել է 63,818 հազ. կՎտxժ էլեկտրական էներգիա և արտահանել Իրան: Այս մասով հասույթը կազմել է 1,511,980 հազ. դրամ, իսկ ինքնարժեքը՝ 1,116,602 հազ. դրամ: Այսինքն Ընկերությունը 2018թ.-ի ընթացքում այս գործարքի շրջանակում ունեցել է 165,816 հազ. դրամի եկամուտ:

ԱՂՅՈՒՍԱԿ 4	2018թ.		2017թ.	
	Հասույթ	Ինքնարժեք	Հասույթ	Ինքնարժեք
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Գազ-էլեկտրաէներգիայի գործառույթ /Վրաստան -Հայաստան/	2,602,896	2,437,081	-	-
Վրաստանի Հանրապետություն բնական գազ	1,090,917	1,320,478	-	-
Վրաստան (էլեկտրական էներգիա)	1,511,980	1,116,602	-	-

[9] 1 խմ իրանական բնական գազ – 4.5 կՎտxժ էլեկտրական էներգիա հարաբերակցությամբ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍԳԱԶ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Ընկերությունը Իրանից ներմուծված բնական գազի մի մասը Իրան-ՀՀ պետական սահմանին հանձնում է Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ Հրազդան 5 կայանին, իսկ մնացած մասը Տրանսգազ Ընկերության միջոցով տեղափոխվում Ընկերության ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկ և Իրան-ՀՀ պետական սահմանից ՀՀ-Վրաստան պետական սահման, տեղափոխված յուրաքանչյուր հազար խմ բնական գազի համար վճարվում է ՀԾԿՀ-ի կողմից հաստատված 9456.277 դրամ/առանց ԱԱՀ/ սակագնով: 2018թ.-ին Տրանսգազ Ընկերության կողմից 2018թ.-ին տեղափոխվել է 154,890 հազ. խմ իրանական բնական գազ, որի գծով 2018թ.-ին բնական գազի տեղափոխման գծով ծախսը կազմել է 1,464,686 հազ. դրամ, որը 508,656 հազ. դրամով ավելին է 2018թ.-ի համար նախատեսվածից և 636,480 հազ. դրամով պակաս 2017թ.-ի փաստացիից:

Իրան արտահանված և ներմուծված էլեկտրական էներգիայի տեղափոխման համար Ընկերությունը «ԲԷՑ», «Հաշվարկային կենտրոն» և «Է.Է.Հ.Օ» Ընկերություններին տեղափոխված յուրաքանչյուր կՎտxժ էլեկտրական էներգիայի համար վճարում է ՀԾԿՀ-ի կողմից հաստատված սակագնով[10]: «ԲԷՑ» Ընկերության կողմից 2018թ.-ին տեղափոխվել է 1,538,250 հազ. կՎտxժ էլեկտրական էներգիա, որի գծով 2018թ.-ին Էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների մասով ծախսը կազմել է 2,317,576 հազ. դրամ, որը 670,817 հազ. դրամով ավելին է 2018թ.-ի համար նախատեսվածից և 251,779 հազ. դրամով պակաս 2017թ.-ի փաստացիից:

[10] «ԲԷՑ» ՓԲԸ՝ 1,1169 դրամ/առանց ԱԱՀ/, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ՝ 0,0389 դրամ/առանց ԱԱՀ/ և «Է.Է.Հ.Օ» ՓԲԸ՝ 0,2457 դրամ/առանց ԱԱՀ/

ԳՆՈՎԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

2018թ.-ին ՀՇԳՑ էներգաբլոկը 7368 ժամից փաստացի աշխատել է 7108 ժամ, այսինքն կանգառը կազմել է 1652 ժամ, մինչդեռ 2018թ.-ի համար նախատեսված նորոգումների համար կանգառը պետք է կազմեր 1392 ժամ: Կապիտալ վերանորոգման աշխատանքների ժամկետի երկարացման հետևանքով կայանի ավել կանգառը կազմել է 260 ժամ: Կայանի 1652 ժամ կանգառի հետևանքով անհրաժեշտ էլեկտրաէներգիան ձեռք է բերվել ՀԷՑ ՓԲ ընկերությունից:[11] Սեփական կարիքների համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի համար Ընկերությունը պլանավորել էր կատարել 45,740 հազ. դրամի ծախս, սակայն փաստացի կատարել է 80,113 հազ. դրամի: Այս ծախսային հոդվածի գծով ավել կատարված ծախսը կազմել է 34,372 հազ. դրամ:

[11] Միջին սակագին՝ 26.233 դրամ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հաշվետու տարում նախահաշվով պլանավորված և փաստացի կատարված ծախսերի վերլուծությունից երևում է, որ Ընկերությունը ունեցել է պլանավորված ծախսերի թերակատարումներ, ինչը առավելապես պայմանավորված է Ընկերության կողմից ծախսերի նպատակային և խիստ տնտեսող քաղաքականության կիրառմամբ:

Նյութական ծախսերը 2018թ.-ին փաստացի կազմել են 568,864 հազ. դրամ, նախահաշվով պլանավորված 806,886 հազ. դրամի փոխարեն, այսինքն տնտեսումը կազմել է 238,021 հազ. դրամ: Նյութական ծախսերում ներառված են էներգաբլոկի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ նյութեր.

Ջուր – 2018թ.-ին ՀՇԳՑ №1 էներգաբլոկում պլանավորված էր օգտագործել 2,615 հազ. խմ ջուր: Փաստացի 2018թ.-ի ընթացքում օգտագործվել է 2,132 հազ. խմ ջուր կապիտալ վերանորոգման ժամկետի ավելացման և տնտեսումների հետևանքով, որից արտադրական նպատակներով օգտագործվել է 2,040 հազ. խմ ջուր, իսկ 91 հազ. խմ կոմունալ կենցաղային նպատակով: 2018թ.-ին կայանում օգտագործված ջրի ծախսը կազմել է 259,407 հազ. դրամ, իսկ սեփական կարիքների համար՝ 32,114 հազ. դրամ: 2018թ.-ի նախատեսվածի համեմատ այս ծախսային հոդվածի գծով տնտեսումը կազմել է 41,972 հազ. դրամ, իսկ 2017թ.-ի փաստացիի համեմատ՝ 5,052 հազ. դրամ:

Քիմիական նյութեր և ինհիբիտորներ և քիմիական լաբորատոր ռեագենտներ

Hungarian Trading Company KFT ընկերությունից 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 235,845 հազ. դրամի քիմիական նյութեր, սակայն փաստացի 2018թ.-ին ձեռք բերումը կազմել է 125,029 հազ. դրամ՝ պայմանավորված պահեստի մնացորդների առկայությամբ:

2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 10,158 հազ. դրամի 46 տոննա կաուստիկ սոդա, սակայն փաստացի Կենցաղային քիմիայի գործարանից ձեռք է բերվել 10,122 հազ. դրամ, տնտեսումը կազմել է 36 հազ. դրամ: 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 5,928 հազ. դրամի 76 տոննա ծծմբական թթու, սակայն փաստացի Յունիքիմ ընկերությունից ձեռք է բերվել 10,485 հազ. դրամի 75 տոննա ծծմբական թթու՝ պայմանավորված գնի շեշտակի բարձրացմամբ: 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 2,108 հազ. դրամ արժողությամբ 113 կգ Օպտիկլին Ա, փաստացի Յունիքիմ ընկերությունից ձեռք է բերվել նաև 2,440 հազ. դրամի 113 կգ Օպտիկլին Ա, իսկ 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 2,595 հազ. դրամի 113 կգ Օպտիկլին Բ, փաստացի Զորաշեն ընկերությունից ձեռք է բերվել 2,323 հազ. դրամի 113 կգ Օպտիկլին Բ, այսպիսով գերածախսը կազմել է 59 հազ. դրամ:

Կոմպրեսորների և այլ սարքերի յուղեր, քսայուղեր 2018թ.-ի համար նախատեսվել է ձեռք բերել 32,425 հազ. դրամի յուղեր, քսայուղեր, փաստացի ձեռք է բերվել 56,069 հազ. դրամի, այսինքն գերածախսը այս մասով կազմել է 23,644 հազ. դրամ՝ պայմանավորված այս ապրանքատեսակների նկատմամբ ակցիզային հարկի կիրառմամբ: Մասնավորապես՝ 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 20,833 հազ. դրամի 2496,0 լիտր յուղ CPI CP1516-100, փաստացի էյ-Ի-Ջի սերվիս Ընկերությունից ձեռք է բերվել 34,097 հազ. դրամի, արդյունքում գերածախսը կազմել է 13,264 հազ. դրամ: 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 5,199 հազ. դրամի 418 լիտր յուղ Mobil SHC 624 VG32, փաստացի Պրեմիում մոթորս Ընկերությունից ձեռք է բերվել 5,158 հազ. դրամի 416 լիտր: 2018թ.-ի համար նախատեսվել էր ձեռք բերել 1,528 հազ. դրամի 836 լիտր յուղ Shell Turbo oil T46, փաստացի Պրեմիում մոթորս Ընկերությունից ձեռք է բերվել 1,887 հազ. դրամի 836 լիտր յուղ, այսպիսով գերածախսը կազմել է 359 հազ. դրամ:

Անհրաժեշտ սարքավորումներ և պահեստամասեր 2018թ.-ին KSB Pumps ընկերությունից փաստացի ձեռք է բերվել 12,143 հազ. դրամի պոմպեր և պահեստամասեր, ProMinent Gmbh ընկերությունից՝ 8,802 հազ. դրամի դոզավորման պոմպի մխոցային հատվածի պահեստամասեր, Նիկo-Տեկ ընկերությունից փաստացի ձեռք է բերվել Kleentek ELC-R10SP յուղամաքրման կայանք 18,960 հազ. դրամի, ՌՎ պրոջեկտս ՍՊԸ ընկերությունից փաստացի ձեռք է բերվել օդորակիչի կոմպրեսոր 3,880 հազ. դրամի, CCI Valve Technology AB ընկերությունից փաստացի ձեռք են բերվել 27,813 հազ. դրամի ռետինե միջադիրներ, ռետինե դետալներ, խտարարներ ածխածնային մանրաթելերից, միջադիրներ սև մետաղից:

GT, ST 7 և այլ ֆիլտրեր 2018թ.-ի համար նախատեսվել է ձեռք բերել 34,192 հազ. դրամի ֆիլտրներ, փաստացի ձեռք է բերվել 16,866 հազ. դրամի, այսինքն թերակատարումն այս մասով կազմել է 17,326 հազ. դրամ: 2018թ.-ին փաստացի Գրիգ շին Ընկերությունից ձեռք են բերվել 1877 հազ. դրամի ֆիլտրներ /Hydraulic filter HC 7500SKP4H, Hydraulic filter HC 9021FDT4H և Hydraulic filter P-VN-06/08A -150W (150 Mesh/SOS Wire)/, որոնց համար նախատեսված է եղել 1644 հազ. դրամ: Հավելենք, որ մնացած ֆիլտրների ձեռք բերումը պլանավորվել է 2019թ.-ի գնումների պլանով:

Տնտեսական և գրենական ապրանքներ 2018թ.-ին Ընկերությունը տնտեսական և գրենական ապրանքներ փաստացի ձեռք է բերել 6,226 հազ. դրամի, որի համար նախատեսվել էր 3,918 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ գերածախսը կազմել է 2,308 հազ. դրամ:

Տրանսպորտային միջոցների պահպանման (վառելիք, յուղ և այլ նյութեր), ընթացիկ նորոգման գումարները Վառելիքի գծով պլանավորված 37,633 հազ. դրամ իրենից ներկայացնում է 2018թ.-ի համար Ընկերության համար պլանավորված վառելիքի ձեռքբերման գումարը, սակայն, փաստացի ձեռքբերումը կազմել է 34,900 հազ. դրամ, այսինքն տնտեսումը կազմել է 2,733 հազ. դրամ: Ընկերության վառելիքի ծախսը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 33,640 հազ. դրամ, արդյունքում, պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 3,993 հազ. դրամ: Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման համար նախատեսվել է 4,166 հազ. դրամ, սակայն փաստացի սպասարկման ծախսը կազմել է 4,489 հազ. դրամ /համապատասխանաբար՝ Ֆլեշ Մոթրս 1,591 հազ. դրամ և Ա/Ձ Վահե Հակոբյան 2,898 հազ. դրամ/: Արդյունքում, պլանավորված մեծության համեմատ գերածախսը կազմել է 323 հազ. դրամ: 2018թ.-ի համար նախատեսվել է ձեռք բերել 2,492 հազ. դրամի անվադողեր, փաստացի ձեռք է բերվել 1,378 հազ. դրամի, այսինքն տնտեսումը կազմել է 1,114 հազ. դրամ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

«Աշխատավարձ» հոդվածով փաստացի ծախսը կազմել է 754,313 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31.12.2018թ.-ին Ընկերության աշխատողների թվաքանակը 229 մարդ է: Այս հոդվածով 2018թ.-ի համար նախատեսված է եղել 758,900 հազ. դրամ: Այսինքն տնտեսումը նախատեսված մեծության համեմատ կազմել է 4,587 հազ. դրամ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴՆ ԸՍՏ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ



ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍ

«Մաշվածություն» հոդվածով ծախսը ՀԾԿՀ-ի կողմից սահմանված սակագներով տրամադրվում է մաշված հիմնական միջոցները նորերով փոխարինելու համար՝ համաձայն հաստատված ներդրումային ծրագրերի: Այդ իսկ պատճառով այս հոդվածով հաշվարկված ծախսը և նախահաշվով պլանավորված ծախսը միմյանց հետ համադրելի չեն: 2018թ. Ընկերությունը պլանավորել էր 3,504,900 հազ. դրամի մաշվածության գծով ծախս, սակայն փաստացի հաշվեգրված ծախսը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 6,821,311 հազ. դրամ:

ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱԽՍԵՐ

2017թ. հոկտեմբեր ամսին նախաձեռնվեց 2018թ. նորոգման աշխատանքների և ծառայությունների պլանի կազմումը, որի ընթացքում կազմվեցին ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի սարքավորումների, սարքվածքների կառույցների նորոգման աշխատանքների և ծառայությունների ծավալները:

Նորոգումների ծավալները կազմելիս մանրամասն ուսումնասիրվել են արտադրող գործարանների կողմից ներկայացված աշխատանքների ծավալները, հրահանգները, որոնց հիման վրա կազմվել են անհրաժեշտ աշխատանքների ծավալները:

Համաձայն 2018թ. նորոգումների ժամանակացույցի ՀՇԳՑԷ-ի հիմնանորոգման աշխատանքները պետք է սկսվեին 2018թ. օգոստոսի 1-ից, սակայն փաստացի սկսվեցին օգոստոսի 4-ին:

C2 ինսպեկցիայի ընթացքում իրականացված աշխատանքների որոշ փուլերում անձնակազմը հանդիպեց մեծ դժվարությունների, հատկապես GT TVC-ների թիակների և դրանց առանձին դետալների ապամոնտաժման ժամանակ: Բարձր ջերմաստիճանային ռեժիմում աշխատող թիակների դետալները միաձույլվել և կպչել էին իրանին և դրանք հանելու համար GE ընկերության մասնագետների ցուցումով հարկ եղավ ձեռք բերել հատուկ էլեկտրակտրող էլեկտրոդներ և կատարել GT TVC-ի 4 և 5 աստիճանի թիակների և դետալների հեռացում կտրման միջոցով: Այդ խնդիրը ևս բերեց հիմնական ժամանակացույցից ուշացման, քանի որ առանց դրա հնարավոր չէին իրականացնել սարքավորումների հավաքման աշխատանքները:

Նորոգման ընթացքում արտադրողի կողմից գրություն ստացվեց, որ հաջորդ 6 տարիների ընթացքում ապահով շահագործման համար անհրաժեշտ է նաև իրականացնել ԳՏ գեներատորի ռոտորի նորոգման աշխատանքներ, որի համար GE ընկերության կողմից պահանջվեց հատկացնել առանձին տարածք և ծածկ: Քանի որ էլեկտրակայանում նման սարքավորումների համար չկա հատուկ նորոգման տարածք, ապա նախատեսվեց կայանի ներսում գոյություն ունեցող ավտոկայանատեղում կառուցել 23x8 մ չափսի 3-4մ բարձրությամբ ժամանակավոր կառույց բրեզենտե հանովի ծածկով, և այնտեղ տեղափոխվեց գեներատորի ռոտորը: Նորոգման արդյունքում պարզվեց, որ ռոտորի պղնձյա դեմպֆերային մեկուսիչը ունի վնասվածք և փոխարինման կարիք ունի: Բացի նշված խնդիրներից նորոգման ժամանակացույցի վրա բացասական ազդեցություն ունեցավ նաև ապրանքների և հատուկ գործիքների մատակարարումների ուշացումը և որպես արդյունք էներգաբլոկը համակարգին միացվեց 11 օր ուշ:

Ընթացիկ նորոգման ծախսերի գծով 2018թ.-ին փաստացի ծախսը կազմել է 19,258 հազ. դրամ:



ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

No	Աշխատանքների անվանումը	Նախատեսված 2018թ. հազ. դրամ	Կատարողը	Փաստացի 2018թ. հազ. դրամ	Նշումներ
1	2	3	4	5	6
	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Գազատուրբինի մոդեռնացում C2 ինսպեկցիայի ժամանակաշրջանում աշխատանքների ծավալները ըստ GE ընկերության ընթացակարգի, ԳՏ գեներատորի նորոգում, յուղի համակարգի մաքրում նախապատրաստոլով համապատասխան սխեմաների դետալները: Շոգետուրբինի, գեներատորի և օժանդակ սարքավորումների հիմնական նորոգում ըստ FUJI, ընկերության ընթացակարգի, յուղերի համակարգերի մաքրում, նախապատրաստելով	445,000	АО Тепло-энергомонтаж	346,625	Կատարված է
2	ՀՇԳՑԷ-ի 6/0.4կՎ ցանցի 35կՎ լարման ենթակայանի սնուցման մալուխի մոնտաժման աշխատանքներ	987.0	Դավիթ էներջի ՍՊԸ	982.0	կատարված է
3	ՀՇԳՑԷ-ի պահեստի և նորոգման արհեստանոցի արտաքին պատերի ստորին հատվածի բազալտե սալապատման աշխատանքներ	2,000	Դողսե ՍՊԸ	1,049	Կատարվել է
4	Հովացման աշտարակների բետոնե կառուցվածքների նորոգում և ներկում	31,150	Պրոթերմ ՍՊԸ	18,690	Կատարվել է

1	2	3	4	5	6
5	Հակակոռոզիոն պաշտպանության աշխատանքներ	3,600	Պրոթերմ ՍՊԸ	2,376	Կատարվել է
6	Քիմիական բաքերի ավազանների նորոգման աշխատանքներ	3,000	Մոնտաժտրանսշին ՍՊԸ	2,107	Կատարվել է
	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3	4	5	6
7	ՀՇԳՑԷ-ի հիմնական C2 ինսպեկցիայի ընթացքում ծանրակշիռ բեռների բեռնաբարձման և բեռնաթափման ծառայություններ	25,000	Հիդրոէլեկտրա մոնտաժ ՓԲԸ	23,580	Կատարվել է
8	Կողավոր մանիպուլյատորի ծառայություններ	5,700	Էրեբունի շին ՍՊԸ	5,700	Կատարվել է՝ լրացուցիչ ծավալներով պայմանավորված
9	Ավտոամբարձիչի ծառայություններ	1,500	Հիդրոէլեկտրա մոնտաժ ՓԲԸ	1,500	Կատարվել է
10	Էլեկտրական սարքերի նորոգման և ստուգման ծառայություններ	2,300	ՆՏՑ էներգիա ՍՊԸ	2,176	Կատարվել է
11	Պտտվող մեխանիզմների նորոգման աշխատանքներ	15,000	Էներգանորոգ-գարանտ	14,586	Կատարվել է
12	Կաթսայական սարքավորումների, արմատուրի վրա կատարվող նորոգման և ստուգման ծառայություններ	5,000	Ռ և ՄԷԱ ՍՊԸ	3,719	Կատարվել է
13	Աղազերծված ջրի բաքի նորոգման ծառայություններ	5,500	Մավշին ՍՊԸ	4,620	Կատարվել է
14	Հիմնական նորոգման ընթացքում ծանրակշիռ և արտագաբարիտային բեռների փոխադրման ծառայություն, ըն դհանուր 300տ	10,000	Հիդրոէլեկտրամոնտաժ ՓԲԸ	9,840	Կատարվել է
15	ՀՇԳՑԷ-ի ԳՏ և ՇՏ հիմքերի նստվածքների գեոդեզիական չափման ծառայություններ	1,800	Հիդրոգեոշին ՍՊԸ	1,700	Կատարվել է
16	Մետաղի ստուգման ծառայություններ	7,500	Էներգակարգա -բերում ՓԲԸ	8,025	Կատարված է լրացուցիչ ծավալով՝ ԳՏ գեներատորի ռոտորի նորոգման մասով
17	ԳՏ գեներատորի ռոտորի նորոգման համար ժամանակավոր կառույցի պատրաստման ծառայություն	12,000	Հիդրոէլեկտրա -մոնտաժ ՓԲԸ	10,090	Կատարվել է՝ լրացուցիչ ծավալներով պայմանավորված

2018Թ.-ԻՑ 2019Թ. ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քա-նակը	Կատ. ժամկետը	Կատարողը	Գումարը /հազ. դրամ/	Նշումներ
1	High Pressure dump bypass,Valve (ԱՌՀՍ -ի կափույրներ) type-VLB -125BTC , Dy=300, Py=76bar, 10MAN10AA901,HP dump bypass TCV 10LAB41AA901, Type-AB300-D10R, Dy=80, Py=108bar	հատ	1	08-09.2018	Ռ և ՄԷԱ	1,542	Կափույրների արտահոսքը հնարավոր չի եղել վերացնել, քանի որ թամբերը կարիք ունեն ներտաշման, որը հնարավոր է կատարել միայն գործարանից բերվող հատուկ սարքի միջոցով: Աշխատանքների կատարումը պլանավորվում է նախատեսել հաջորդ տարի նախապես պատվիրելով հղկող սարքը և համապատասխան պահեստամասերը:
2	Low Pressure dump bypass, (ԱՌՀՍ -ի կափույրներ) 10MAP50AA901, Dy=400, Py=7bar, Model -840 Series,Serial No.-962001-01, LP dump bypass TCV, 10LA-B65AA901,Type-AB300-D06R, Dy=25,Py=14bar	հատ	1	08-09.2018	Ռ և ՄԷԱ		
3	HP/2,5MPa dump bypass, (ԱՌՀՍ -ի կափույրներ) 10LBA11AA901, Dy=200, Py=78bar, Valve type VST -125BCSE, HP/2,5MPa bypass TCV 10LAB42AA901, Type-AB300-D06R, Dy=40,Py=108bar	հատ	1	08-09.2018	Ռ և ՄԷԱ		
4	2,5MPa/1,3MPa dump bypass, (ԱՌՀՍ -ի կափույրներ) 10LBD22AA901, Dy=250, Py=30bar, Valve type VST - 160BCSE , 2.5/1.3MPa TCV 10LAB44AA901, Type-AB300-D06R, Dy=40, Py=108bar	հատ	1	08-09.2018	Ռ և ՄԷԱ		
5	2,5MPa extraction steam/2,5MPa dump bypass, (ԱՌՀՍ -ի կափույրներ) 10LBD10AA901 , Dy=150, Py=40bar, Valve type VST -100RB / with SE Plug ,2,5MPa ext/Hdr Bypass , TCV,10LA-B46AA901,Type-AB300-D06R, Dy=20, Py=108bar,	հատ	1	08-09.2018	Ռ և ՄԷԱ		
6	Բարձր ճնշման սնուցման պոմպեր “A” և “B”	հատ	1	08-09.2018	Էներգա-նորոգ-գարանտ	659.8	Գործարանի ներկայացուցչի ցուցումով կատարվել է միայն B պոմպի առանցքակալների և խցվածքների նորոգում: A պոմպը հնարավոր չեղավ նորոգել ագույցի դուրս չգալու պատճառով, որի նորոգումը պլանավորվում է կատարել հաջորդ տարի նոր ագույցի ձեռքբերումից հետո(որը կհանվի միայն կտրման միջոցով)

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Այլ ծախսերի գծով ծախսը 2018թ.-ին փաստացի կազմել է 304,446 հազ. դրամ, նախահաշվով պլանավորված 355,930 հազ. դրամի փոխարեն, այսինքն տնտեսումը կազմել է 51,483 հազ. դրամ:

Այլ ծախսերի հոդվածում ներառված են հետևյալ ծախսային հոդվածները՝

Գործուղման և ներկայացուցչական ծախսեր Ընկերությունը 2018թ.-ին փաստացի կատարել է 21,850 հազ. դրամի գործուղման և ներկայացուցչական ծախսեր, որով իրականացվել են «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի շրջանակներում միջազգային գործընկերների հետ պաշտոնական բանակցությունների և փաստաթղթերի ստորագրման անհրաժեշտությամբ պայմանավորված այցելություններ ու գործուղումներ, ինչպես նաև Իրանի և ՀՀ-ի միջև գազի և էլեկտրաէներգիայի հետ կապված միջպետական հուշագրերով նախատեսված երկու փոխշահավետ գործառույթի շրջանակներում կողմերի (Թավանիր և ԻԳԱԸ) միջև հաստատված փոխադարձ բանակցություններ, երկարատև խորհրդակցությունների և քննարկումների ընդմիջումների ժամանակ թեթև սննդի կազմակերպում, տրանսպորտային աջակցություն այդ անձանց միջոցառումների կազմակերպման վայր և հետադարձ տեղափոխում, պաշտոնական ընթրիք, հուշանվերների ձեռքբերում և այլ նմանատիպ ծախսեր: 2018թ.-ին Ընկերությունը համապատասխան մասնագիտական խմբով այցելել է Անգլիա և Շվեյցարիա՝ գազատուրբինի կապիտալ վերանորոգումն իրականացնող Ջեներալ Էլեկտրիկ Ընկերության մասնագետների հետ հանդիպումների համար: Հանդիպումներ են եղել Ջեներալ Էլեկտրիկ Ընկերության գործարանում՝ ք. Բադեն, որտեղ քննարկվել է 2018թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսների պլանավորված կապիտալ վերանորոգման հետ կապված մի շարք հարցեր: Այս ծախսային հոդվածի գծով գերածախսը 2018թ.-ի նախատեսվածի համեմատ կազմել է 2,550 հազ. դրամ:

Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր 2018թ.-ի համար փոստի և հեռահաղորդակցության ծառայությունների գծով, որը ներառում է Ընկերության հեռախոսակապի, ինտերնետային, սուրհանդակային և փոստային հաղորդակցության ծառայությունները /Էյբիսիդոմեն ՍՊԸ, ՄՏՍ Հայաստան, Յուսակս ՍՊԸ, Հայփոստ ՓԲԸ, Յուքոմ ՍՊԸ, Ջի դիզայն ՍՊԸ, Վեոն Արմենիա ՍՊԸ/, փաստացի կատարվել է 5,584 հազ. դրամի ծախս, նախատեսված 13,000 հազ. դրամի փոխարեն, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսումը կազմել է 7,415 հազ. դրամ:

Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր Ընկերության և «ՍՈՍ աուդիտ» ՍՊԸ-ի /ներկայիս՝ Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ/ հետ 2016թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի (Պայմանագիր ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ N 25/16) շրջանակներում 2018թ.-ի փաստացի աուդիտորական ծառայությունների գծով ծախսը կազմել է 9,572 հազ. դրամ, այս գծով նախատեսվել էր 8,010 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ գերածախսը կազմել է 1,562 հազ. դրամ:

Բանկային ծախսեր 2018թ.-ին ընթացիկ հաշիվների սպասարկման և արտարժութային փոխանցումների համար գանձվող միջնորդավճարների գծով բանկային ծախսերը փաստացի կազմել են 2,963 հազ. դրամ, որի գծով նախատեսվել էր 16,470 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսումը կազմել է 13,506 հազ. դրամ:

Պայմանագրային աշխատանքների գծով 2018թ.-ին փաստացի ծախսը կազմել է 253,057 հազ. դրամ:

Այս հոդվածի ծախսերն իրենց մեջ ներառում են.

պահնորդային ծառայությունը Ընկերությանը պահնորդային ծառայություն է մատուցում ՀՀ Ուս. Պետ. պահ. գլխ. Վարչության թիվ 1 ռազմականացված ջոկատը: Ստացված ծառայության մասով 2018թ.-ի փաստացի և նախատեսված ծախսը կազմել է 130,354 հազ. դրամ:

աութսորսինգային ծառայությունը Ընկերության հաշվապահական հաշվառումը իրականացվում է աութսորսինգային կազմակերպության կողմից՝ Դի Ջի Քոնսալթինգ ՍՊԸ: 2018թ.-ին հաշվապահական հաշվառման վարման (աութսորսինգային) ծառայությունների մատուցման մասով փաստացի ծախսը կազմել է 59,604 հազ. դրամ: Այս ծախսային հոդվածի գծով Ընկերությունն ունի շուրջ 40,296 հազ. դրամի տնտեսում: 2018թ.-ին Դի Ջի Քոնսալթինգ ՍՊԸ հետ կնքել է 32,800 հազ. դրամի պայմանագիր, 2017թ.-ի 99,900 հազ. դրամի փոխարեն:

մաքսային բրոքերական ծառայություն 2018թ.-ին Ընկերությունը մաքսային բրոքերական ծառայության մատուցման պայմանագիր է կնքել Ֆաստ բրոք սերվիս Ընկերության հետ, որի մասով փաստացի ծախսը կազմել է 8,764 հազ. դրամ: Նախատեսված 7,500 հազ. դրամից 1,264 հազ. դրամով գերածախսը պայմանավորված է կապիտալ վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի, գործիքների, պահեստամասերի, ապրանքների լրացուցիչ ծավալների ներմուծման և արտահանման մաքսային ձևակերպումներով:

համակարգչային տեխնիկայի սպասարկման ծառայություն 2018թ.-ին նախատեսվել էր կատարել 2,000 հազ. դրամի ծախս, սակայն փաստացի ծախսը կազմել է 1,587 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 412 հազ. դրամ: Ծառայությունները մատուցվել են Այ Սերվիս, Լանար Սերվիս և Սոֆթ Թայմ Ընկերությունների կողմից:

օդորակիչների նորոգման ծառայություն 2018թ.-ին նախատեսվել էր կատարել 8,960 հազ. դրամի ծախս, սակայն փաստացի ծախսը կազմել է 7,048 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 1,912 հազ. դրամ: Օդորակիչների նորոգման ծառայություն մատուցվել է Ա/Ձ Մեսրոպ Աղազարյանի կողմից

ծրագրային սպասարկման հաշվապահական ծրագրի սպասարկման մասով 2018թ.-ին փաստացի ծախսը կազմել է 3,035 հազ. դրամ: Ծառայությունը մատուցվում է Հայկական ծրագրեր Ընկերության կողմից:

ավտոմեքենաների տեխզննման և ապահովագրական ծախսեր 2018թ.-ին այս ծախսային հոդվածի մասով նախատեսվել էր կատարել 1,041 հազ. դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 1,199 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ գերածախսը ավտոմեքենաների ավելացմամբ պայմանավորված կազմել է 158 հազ. դրամ:

դեռատիզացիայի գծով ծախս դեռատիզացիայի ծառայությունը մատուցվել է Երևանի կանխարգելիչ ախտահանում Ընկերության կողմից, որի գծով 2018թ.-ին նախատեսվել էր կատարել 1,680 հազ. դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 1,130 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 550 հազ. դրամ:

նորմերի մշակման գծով ծախս 2018թ.-ի ապրիլի 16-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը №15-Ա հանձնարարագրով իրականացրել է ստուգում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ում: Ստուգման արդյունքում տրվել են հետևյալ հանձնարարականները՝

1. Պետական լիազոր մարմնի համաձայնեցմանը ներկայացնել Ընկերության գործունեության ընթացքում կեղտաջրերի մաքրումից առաջացող նստվածքի (թափոնի) անձնագիրը: «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն ի կատարում նշված հանձնարարականի 2018թ-ի հոկտեմբերի 1-ին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացել է նշված թափոնի հաստատված անձնագիրը:
2. Նույն հանձնարարականի շրջանակներում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն պետք է ընկերության տարածքում վտանգավոր թափոնների պահպանման համար սկսեր համապատասխան լիցենզիա ստանալու գործընթաց կամ համապատասխան կազմակերպությկան կողմից իրականացներ վտանգավոր թափոնների վնասազերծումը, ինչը և իրականացվել է 2018թ-ի դեկտեմբերի 11-ին համապատասխան գործունեություն իրականացնող ընկերության կողմից:

2018թ.-ին էկոբարիք Աուդիտ Ընկերության կողմից իրականացվել են կեղտաջրերի մաքրումից առաջացող նստվածքի/թափոնի/ անձնագրի կազմման, Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի սահմանային թույլատրելի արտանետումների նորմերի նախագծման ծառայություններ, որոնց գծով նախատեսվել էր 9,700 հազ. դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 7,930 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսումը կազմել է 1,770 հազ. դրամ:

բեռնափոխադրում, տերմինալի ծառայություն Ընկերության կողմից 2018թ.-ին նախատեսվել էր կատարել 8,400 հազ. դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 6,321 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 2,079 հազ. դրամ: Ծառայությունները մատուցվել են հետևյալ ընկերությունների կողմից՝ Մետեքսիմ Տերմինալ՝ 2,138 հազ. դրամի, Արմենիա միջազգային օդանավակայաններ՝ 1,773 հազ. դրամի, Էն Փի Սի Ընկերություն՝ 2,410 հազ. դրամի:

գույքի գնահատման ծառայություն 2018թ.-ին փաստացի ծախսը կազմել է 9,890 հազ. դրամ, արդյունքում պլանավորված մեծության համեմատ տնտեսվել է 10,010 հազ. դրամ: Գույքի գնահատման ծառայությունը իրականացվել է Արթին Էնթրփրայս Ընկերության կողմից: Գնահատումը կատարվել է հին ջերմաէլեկտրակենտրոնի հիմնական միջոցների և պաշարների շուկայական արժեքի գնահատման մեթոդով:

չնախատեսված այլ ծախսեր հոդվածով Ընկերությունը 2018թ.-ին փաստացի կատարել է 11,418 հազ. դրամի ծախս, որից 3,771 հազ. դրամը գնումների համակարգողի ծառայության գծով ծախսն է, որը փաստացի իրականացվել է գնումների բաժնի պետի հաստիքի կրճատումից տնտեսված գումարի հաշվին, իսկ 1,656 հազ. դրամը՝ իրավաբանական և կադրային խորհրդատվական ծառայությունների գծով ծախսը, 655 հազ. դրամը՝ խմելու ջրի ծախսն է՝ էվրի դեյ ընկերությունից ձեռք բերված, 629 հազ. դրամը՝ տրանսպորտային միջոցների վարձակալության գծով ծախսն է, 2,859 հազ. դրամը նախկին աշխատակիցների վնասի փոխհատուցման գծով ծախսը, 1,846 հազ. դրամը ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարն է:

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

Հարկեր և պարտադիր այլ վճարներ հոդվածով փաստացի ծախսը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 116,124 հազ. դրամ, նախատեսված 94,016 հազ. դրամի փոխարեն: Իսկ 2017թ.-ի փաստացի ծախսը կազմել է 105,437 հազ. դրամ: Այսինքն այս հոդվածի մասով Ընկերության գերածախսը 2018թ.-ի նախատեսվածի համեմատ կազմել է 22,108 հազ. դրամ: Չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ, աղբահանության վճար, բնապահպանական վճար) մասով փաստացի ծախսը կազմել է 20,532 հազ. դրամ, նախատեսված 14,727 հազ. դրամի փոխարեն:

Գործող 4 (չորս) լիցենզիաների համար պետական տուրքի գծով Ընկերության փաստացի ծախսը կազմել է 45,855 հազ. դրամ, նախատեսված 30,714 հազ. դրամի փոխարեն, այսինքն այս մասով գերածախսը՝ 15,141 հազ. դրամ, պայմանավորված է Վրաստան արտահանված բնական գազի և ներմուծված էլեկտրական էներգիայի լիցենզիայի գումարի վճարմամբ:

Կարգավորման պարտադիր վճարների գծով Ընկերության փաստացի ծախսը կազմել է 49,737 հազ. դրամ, նախատեսված 48,575 հազ. դրամի փոխարեն:

ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ

Ընկերության վարկերի տոկոսների գծով ծախսը նախատեսվել էր 1,210,200 հազ. դրամ, սակայն 2018թ.-ին ծախսը փաստացի կազմել է 1,294,052 հազ. դրամ, որից 179,976 հազ. դրամը կապիտալացվել է 220/110/35 կՎ ենթակայանի արժեքին:

ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԸ

ա) Ընթացիկ վարկեր և փոխառություններ

Փոխառություններ	Տարեսկզբի մնացորդ	Տարվա շարժ				Տարեվերջի մնացորդ
		Տրամադրում	Տոկոսի հաշվեգրում	Փոխարժեքային տարբերություն	Մարում	
Վարկեր առևտրային բանկերից						
ԱՄՆ դոլարով	918,455	-	4,169	(6,458)	(916,166)	-
Եվրոյով	1,252,511	-	5,256	40,631	(1,298,398)	-
Փոխառություններ						
Որոտան	4,593,490	-	-	-	-	4,593,490
Ընդամենը	6,764,456	-	9,425	34,173	(2,214,564)	4,593,490

բ) Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ

Վարկեր	Տարեսկզբի մնացորդ	Տարվա շարժ				Տարեվերջի մնացորդ
		Տրամադրում	Տոկոսի հաշվեգրում	Փոխարժեքային տարբերություն	Մարում	
«Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկի) նախագիծ (JICA, ARM-P2)»	102,543,971	-	770,329	2,036,919	(4,605,479)	100,745,740
«Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում» (IBRD 8615-AM)	9,068,185	285,343	303,040	(2,502)	(289,032)	9,365,034
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM)-	2,696,141	5,483,568	168,136	3,391	(144,590)	8,206,646
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM) Համաֆինանսավորում	767,985	1,317,954	43,122	-	(78,364)	2,050,697
Ընդամենը	115,076,282	7,086,865	1,284,627	2,037,808	(5,117,465)	120,368,117

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Գործառնական այլ եկամուտներ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտները կազմել են 1,406,680 հազ. դրամ, որից՝

ծառայությունների մատուցումից /վարձակալությունից/ եկամուտը ՝ 2,164 հազ. դրամ /ՄՏՍ-Հայաստան ՓԲԸ-ից՝ 1,000 հազ. դրամ, Բիգ Քար ՍՊԸ-ից՝ 406 հազ. դրամ, Տեպլոէներգոմոնտաժ ՓԲԸ-ից՝ 758 հազ. դրամ/,

արտարժույթի փոխարկումից եկամուտը՝ 520 հազ. դրամ,

ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտը՝ 566,327 հազ. դրամ, որից 101,350 հազ. դրամը Fuji Elektric Co LTD և GE Global Parts & Products GmbH ընկերությունների կողմից անհատույց տրամադրած պահեստամասերի արժեքն է, իսկ 444,116 հազ. դրամի եկամուտը՝ նախորդ տարիներին որպես շնորհ ձևակերպված գումարներն են, 20,860 հազ. դրամը Վեոլիա Ջուր ընկերության կողմից սուբսիդավորված գումարներն են,

անհատույց տրված ակտիվների գծով ծախսը կազմել է 3,560 հազ. դրամ, որից ֆինանսական օգնությունների գծով ծախսը կազմել է 1,960 հազ. դրամ, իսկ 1,600 հազ. դրամը՝ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր միջազգային ամսագրի տպագրական և պահպանման ծախսերի համար աջակցությունն է, որը հաստատվել է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից,

այլ եկամուտները՝ 841,227 հազ. դրամ, այդ թվում ապահովագրական Ընկերության կողմից նյութական վնասի փոխհատուցումից եկամուտը կազմել է 1,182 հազ. դրամ, որի մասով ծախսը կազմել է 11,135 հազ. դրամ, իսկ տարբերությունը փոխհատուցվել է 2019թ.-ին՝ 12,540 հազ. դրամի չափով:

Գործառնական այլ ծախսեր հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր ծախսերը կազմել են 799,430 հազ. դրամ, որից տույժերի և տուգանքների գծով ծախսերը կազմել են 376 հազ. դրամ, պաշարների օտարումից ծախսերը կազմել են 710,446 հազ դրամ, ինչը Ջեներալ Էլեկտրիկ ընկերության կողմից փոխարինված պահեստամասերի արժեքն է:

Ընկերությունն արտարժույթով իրականացված գործարքները փոխարկում է դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը, իսկ արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվան նախորդող օրվա փոխարժեքով: Արտարժութային օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում Ընկերության արտարժույթի փոխարկումից եկամուտները կազմել են 520 հազ. դրամ, իսկ ծախսերը՝ 38,972 հազ. դրամ: Այսպիսով, Ընկերությունը 2018թ. ընթացքում արտարժույթի փոխարկումից վնասը կազմում է 38,452 հազ. դրամ:

Ֆինանսական եկամուտ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտը կազմել է 574,457 հազ. դրամ: Ընկերությունը 2018թ.-ին նախատեսվող կապիտալ նորոգման ծախսերի իրականացման նպատակով «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում բացված ավանդային հաշվում 2018թ.-ին ստացել է 574,457 հազ. դրամի եկամուտ կուտակված ավանդի հաշվեգրած տոկոսից:

Ոչ գործառնական այլ եկամուտներ հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր եկամուտները կազմել են 364,785 հազ. դրամ, որից՝ հիմնական միջոցների վաճառքից եկամուտները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 1,491 հազ. դրամ, որի մնացորդային արժեքը կազմել է 739 հազ. դրամ, այսինքն այս մասով Ընկերության եկամուտը կազմել է 752 հազ. դրամ:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած եկամուտը կազմում է 363,294 հազ. դրամ, մինչդեռ փոխարժեքային տարբերություններից առաջացած ծախսերը՝ 2,270,404 հազ. դրամ, այս մասով Ընկերության վնասը կազմել է 1,907,110 հազ. դրամ:

Ոչ գործառնական այլ ծախսեր հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր ծախսերը կազմել են 60,321 հազ. դրամ, որից դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսերը կազմել են 59,582 հազ. դրամ, հիմնական միջոցների օտարումից ծախսերը կազմել են 739 հազ. դրամ:

Արդյունքում 2018թ.-ի Ընկերության շահույթը կազմում է 40,860 հազ. դրամ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



03

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆինանսական վիճակ	2018թ.	2017թ.	Տարբերություն, %
	հազ. դրամ	հազ. դրամ	
ԱԿՏԻՎՆԵՐ			
ոչ ընթացիկ ակտիվներ	132,372,798	132,630,298	-0.19
ընթացիկ ակտիվներ	18,736,277	23,889,725	-21.6
ընդամենը ակտիվներ	151,109,075	156,520,023	-3.46
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բաժնետիրական կապիտալ	1,852,615	10,424,652	-82.23
Էմիսիոն եկամուտ	11,264,865	2,692,828	318.33
Վերագնահատման պահուստ	8,126,425	8,739,014	-7.0
Կուտակված վնաս	-19,348,968	-20,002,418	3.27
ընդամնեը կապիտալ	1,894,936	1,854,076	2.2
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	115,060,876	115,076,282	-0.01
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	32,289	-100
ոչ ընթացիկ պարտավորություններ	115,060,876	115,108,571	-0.04
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	9,900,731	6,764,456	46.36
Եկամուտներին վերաբերող շնորհներ	-	411,828	-100
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	24,252,533	32,381,092	-25.10
ընթացիկ պարտավորություններ	34,153,263	39,557,376	-13.66
ընդամենը պարտավորություններ	149,214,139	154,665,947	-3.52
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	151,109,075	156,520,023	-3.46

2018թ. ընկերության հիմնական միջոցները ավելացել են 8,574,422 հազ դրամով, որը իրենից ներկայացնում է

	Հազար դրամ
Կապիտալ շինարարություն	2,306,990
Կապիտալ նորոգում	5,995,639
Մատակարարներից գնված	78,001
Այլ մուտքեր	193,792
	8,574,422

իսկ մաշվածության գծով ծախսը 2018թ.-ին կազմել է 6,821,311 հազ. դրամ:

Ընկերությունը 31.12.2018թ.-ին ունի ներդրած 3,000,001 հազ. դրամ բանկային ավանդ, և լրացուցիչ առևտրային վարկեր ներգրավելու կարիք չունի:

2018թ. ՀՀ Կառավարության N884-Ա որոշմամբ իրականացվել է կանոնադրական կապիտալի նվազեցում 8,572,037 հազ. դրամի չափով, բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցման միջոցով՝ Ընկերության մեկ բաժնետոմսի գինը 31.12.2018թ.-ի դրությամբ կազմել է 815 դրամ մինչ այդ սահմանված 4,586 դրամի փոխարեն:

2018թ.-ին Ընկերության կուտակված վնասը 2017թ.-ի համեմատ նվազել է 653,450 հազ. դրամով և կազմում է 19,348,968 հազ. դրամ:

Առևտրային բանկերից ստացված վարկերը 2,214,564 հազ. դրամի չափով ամբողջությամբ մարվել են 2018թ-ի հունվարին, որի հետևանքով առևտրային վարկերի տոկոսային ծախսը նվազել է 189,581 հազ. դրամով:

Վարկերի և փոխառությունների գծով պարտավորությունները 2018թ.-ին 2017թ.-ի հետ համեմատ ավելացել են 3,120,869 հազ. դրամով, քանի որ «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» շրջանակներում Ընկերության ենթակայանի վերակառուցման ծրագիրը ավարտվում է 2019թ. և 6,801,522 հազ. դրամի մասհանումը բաժին է ընկել 2018թ.-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ցուցանիշներ	2018թ.	2017թ.	Փոփոխություն, %
	հազ. դրամ	հազ. դրամ	
Հասույթ	94,238,252	70,897,868	32.92
Վաճառքի ինքնարժեք	-87,065,390	-63,695,929	36.69
Համախառն շահույթ	7,172,862	7,201,939	-0.4
Այլ եկամուտ	705,240	76,539	821.41
Վարչական ծախսեր	-911,980	-563,976	61.71
Այլ ծախսեր	-3,400,703	-1,330,655	155.57
Գործառնական գործունեությունից շահույթ	3,565,419	5,383,847	-33.78
Ֆինանսական եկամուտ	574,458	348,910	64.64
Ֆինանսական ծախսեր	-1,114,075	-1,221,844	-8.82
Ֆինանսական ակտիվների արժեզրկում	-59,582	-8,457,039	-99.3
Հիմնական միջոցների արժեզրկում	-	-86,606	-100
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ), զուտ	-1,907,110	-3,855,641	-50.54
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/(կորուստ), զուտ	752	58,818	-98.72
Վնաս մինչև հարկումը	1,059,862	-7,829,555	113.54
Շահութահարկի գծով փոխհատուցում /(ծախս)	-1,019,002	706,234	-244.29
Տարվա վնաս	40,860	-7,123,321	100.57
EBITDA	10,386,730	9,463,815	9.75

Ընկերության ստացված վարկերը և փոխառությունները արտահայտված են ճապոնական իենով, ԱՄՆ դոլարով և եվրոյով, որի հետևանքով ընկերությունը կրել է զուտ վնաս արտարժույթի փոխարժեքային տարբերությունից 1,907,110 հազ. դրամի չափով:

EBITDA ցուցանիշը 2018թ.-ին կազմել է 10,386,730 հազ. դրամ, ինչը 922,915 հազ. դրամով կամ 9.75 տոկոսով գերազանցում է 2017թ.-ի նույն ցուցանիշը:
Արդյունքում 2018թ.-ի Ընկերության շահույթը կազմում է 40,860 հազ. դրամ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ

Ցուցանիշներ	2018թ.	2017թ.	Փոփոխություն, %
	հազ. դրամ	հազ. դրամ	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Իրացումից մուտքեր	65,751,619	51,727,009.00	27.1
Մատակարարներին վճարումներ	-51,323,187	-39,163,283.00	-31.05
Աշխատակիցներին վճարումներ	-559,456	-528,732.00	5.8
Հարկերի վճարում	-602,374	-1,288,088.00	-53.2
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	13,266,602	10,746,906	23.4
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Տրամադրված փոխառությունների մարում	24,288	-	-
Ավանդներից տոկոսային մուտքեր	574,458	348,910	64.6
Հիմնական միջոցների դիմաց վճարումներ	-15,703,481	-2,513,550	524.75
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	1,740	347,805	-99.5
Ոչ նյութական ակտիվների դիմաց վճարումներ	-1,711	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(15,104,706)	-1,816,835	731.4
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերից և փոխառություններից մուտքեր	7,086,865	7,156,398	-0.9
Վարկերի և փոխառությունների մարում	-6,059,095	-10,202,002	-40.6
Վճարված տոկոսներ	-1,272,936	-1,279,042	-0.5
Բաժնեմասերի թողարկումից մուտքեր	-	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-245,166	-4,324,646	-94.3
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	-2,083,270	4,605,425	-145.2
Փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	-37,990	-13,403	183.4
Փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	-37,108	19,498	-290.3
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	6,072,915	1,461,395	315.6
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	3,914,547	6,072,915	-35.5

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Հաշվարկի բանաձև	Նորմատիվ մեծություն	2018թ.	2017թ.
ընթացիկ իրացվելիության գործակից	ընթացիկ ակտիվներ/ ընթացիկ պարտավորություններ	≥2	0.54	0.6
ֆինանսական անկախության գործակից	կապիտալ / հաշվեկշիռ	≥0.5	0.01	0.01
ինքնավարության գործակից	(Կապիտալ + ՈՉ ընթացիկ պարտավորություններ) / հաշվեկիռ	≥0.75	0.8	0.75
աշխատանքի արտադրողականություն[12]	իրացումից հասույթ/ աշխատողների տարեկան միջին ցուցակային թիվ		418,836.7	317,927.7
պարտքի գործակից	ընթացիկ պարտավորություններ/ ընթացիկ ակտիվներ	0-1	1.8	1.6

Ընթացիկ իրացվելիության գործակիցը ցածր է սահմանված նվազագույն արժեքից, սակայն Ընկերության ընթացիկ պարտավորությունները գտնվում են կառավարելի շրջանակներում: Ցուցանիշի նվազագույն արժեքից ցածր լինելը պայմանավորված է Ընկերության հիմնական գործունեության արդյունք չհանդիսացող Որոտան ՀԷԿՀ ՓԲԸ-ին ընթացիկ պարտքի առկայությամբ: Նախատեսում է Ընկերության կանոնադրական կապիտալը համալրել ՀՀ կառավարության որոշմամբ 8,093,500 հազ. դրամի չափով: Ընկերության հաշվեկշռում վերոնշված պարտքի վերկառուցման արդյունքում կվերափոխվի նաև պարտքի գործակիցը: Եվ արդյունքում Ընկերությունը կունենա ֆինանսական առողջ վիճակ՝ ակտիվների և պարտավորությունների թույլատրելի համադրությամբ:

Ֆինանսական անկախության գործակիցը ցույց է տալիս Ընկերության ընդհանուր ակտիվներում սեփական կապիտալի տեսակարար կշիռը: Այս գործակիցը ցածր է սահմանված նվազագույն արժեքից, ինչը արդյունք է Ընկերության ներդրումային գործունեության հիմնականում փոխառու միջոցներով ֆինանսավորմամբ՝ 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցմամբ և ՀՇԳՑ էներգաբլոկի կառուցմամբ:

Ինքնավարության գործակիցը ցույց է տալիս, թե Ընկերության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին: Ինքնավարության գործակիցը դրսևորում է շարունակական աճի միտում՝ 2017թ.-ի 0.75-ի փոխարեն՝ 0.8, սա արդեն դրական արդյունք է, քանի որ ներգրավված բոլոր միջոցները երկարաժամկետ են:

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունը աշխատել է շահույթով, որը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- 2017թ.-ի համեմատ փոխարժեքային տարբերությունից առաջացած զուտ վնասի 1,948,531 հազ. դրամով նվազմամբ,
- 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հին ջերմաէլեկտրակենտրոնի վերագնահատման արդյունքում մաշվածության հաշվարկի դադարեցմամբ:

Արդյունքում 2018թ.-ի Ընկերության շահույթը կազմում է 40,860 հազ. դրամ:

[12] հազ. դրամ/մարդ

04

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը շարունակաբար ձեռնարկում է միջոցներ բացահայտելու Ընկերության ունեցած կադրերի, նրանց աշխատանքի մոտիվացիայի պայմանների համապատասխանությունն իր կողմից նախանշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պահանջներին: Միաժամանակ Ընկերության համար որպես միջնաժամկետ ցուցանիշ է համարվում անձնակազմի սոցիալական զարգացումը, կրթական մակարդակի բարձրացումը, երիտասարդ մասնագետների ներգրավումը, այսինքն՝ նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական ավելացումը: Ընկերությունը կարևորվում է աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումը: Վերապատրաստման ծրագրերում առանձնահատուկ տեղ են գրավում բարձր և միջին օղակի ղեկավարության համար կազմակերպվող սեմինար-քննարկումները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Անձնակազմն ըստ պաշտոնի



Աշխատակազմն ըստ կրթության մակարդակի



Տարիքային խմբեր



05

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2018թ.-ին ՀԾԿՀ-ի կողմից առ 18.04.2018թ.-ի թիվ 122Ա որոշմամբ հաստատվել է «Երևանի ՋԷԿ» ՓԲ ընկերության ներդրումային ծրագիրը 254,330 հազ. դրամի ընդհանուր ծավալով[13]: Ընկերության 2018թ.-ի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված ներդրումային ծրագրի հիմնական ուղղություններով ներդրումները փաստացի կազմել են 145,463 հազ. դրամ՝

- Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերումը կազմել է 55,290 հազ. դրամ, որի համար հաստատվել էր 59,099 հազ. դրամ ֆինանսավորում

ՄԱՍԱՄԲ ԼՈՒԾՎԵԼ Է ՀԵՐԹԱՓՈԽԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԽՆԴԻՐԸ: ՆՎԱՋԵՑՎԵԼ ԵՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ:

- Խմելու ջրի խողովակաշարի վերակառուցման աշխատանքի իրականացումը հաստատվել է 2018թ.-ի ներդրումային ծրագրով, քանի որ կապալառուի՝ «Շահարտ» ՍՊԸ-ի, հետ պայմանագիրը կնքվել է 2018թ.-ի դեկտեմբերի 5-ին և աշխատանքների ավարտը սահմանվել է 90 օրացույցային օր, ուստի աշխատանքների ծավալը կիրականացվի 2019թ.-ի ներդրումային ծրագրով: Պայմանագրի արժեքը կազմում է 77,550 հազ. դրամ, որի համար հաստատվել էր 81,200 հազ. դրամ ֆինանսավորում,

ԱՌԿԱ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՎԹԱՐՆԵՐԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ ԵՎ ՋՐԻ ԾԱԽՍԻ ԿՐՃԱՏՈՒՄ

- Գրասենյակային գույքի ձեռքբերումը կազմել է 228 հազ. դրամ, որի ֆինանսավորումը հաստատվել էր 1,250 հազ. դրամ: Համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը կազմել է 12,395 հազ. դրամ, որի համար հաստատվել էր 13,546 հազ. դրամ ֆինանսավորում,

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

[13] Ներդրումային ծրագիրը իրականացվել է Ընկերության սեփական միջոցներով

ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԾԿՀ-ի կողմից առ 27.12.2017թ. թիվ 586Ա որոշմամբ հաստատվել է Երևանի ՋԷԿ ՓԲԸ ներդրումային ծրագիրը: Ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի Alstom GT-13E2 MXL/MCL տիպի գազատուրբինի՝ MXL2 ռեժիմի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագրով նախատեսվել է 20,75 մլն եվրո, այդ թվում՝

- էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկներով նախատեսված նորոգման ծախսերում կուտակված միջոցներ 11.37 մլն եվրո,
- վերադարձվող պահեստամասերի արժեքից նվազեցումներ՝ 3,34 մլն եվրո,
- ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր 6,04 մլն եվրո,

Սակայն կապիտալ վերանորոգման ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ Ընկերությունը կրել է լրացուցիչ 217,245 եվրոյի ծախս, այդ թվում.

- աշխատանքների կատարման գծով գերածախսը կազմել է 158,015 եվրո,
- վարձակալված գործիքների գծով գերածախսը կազմել է 80,561 եվրո,
- նյութերի գծով տնտեսումը կազմել է 21,332 եվրո,

Սակայն Ընկերության ղեկավարության հետևողականության արդյունքում 2018թ.-ին Ջեներալ էլեկտրիկ Ընկերությունից ստացվել է 161,563 եվրոյի փոխհատուցում: Արդյունքում Ընկերության գերածախսը կազմել է ընդամենը 55,681 եվրո:

ՀՀ Կառավարության համապատասխան 2018թ. հուլիս և 2017թ.-ի նոյեմբեր ամիսների որոշումներով, Ընկերությունը գազատուրբինի վերազինման ներդրումային ծրագրերի շրջանակներում սարքավորումների և սպառվող նյութերի ներմուծման ժամանակ ԱԱՀ-ի վճարումը հետաձգել է 2,128,092 հազ. դրամով, որից 2,074,517 հազ. դրամը համաձայն առ 23.11.2017թ-ի ՀՕ192-Ն օրենքի ազատվել է ԱԱՀ-ի վճարումից, իսկ մաքսատուրքի մասով՝ 540,512 հազ. դրամի չափով:

ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի արդյունավետության բարձրացման խնդիրները մշտապես գտնվել են շահագործման կազմակերպման հիմքում, որոնք պետք է նպատակաուղղված լինեն էներգաբլոկի հիմնական տեխնիկական ցուցանիշների բարելավմանը՝

- էներգաբլոկի հզորության ավելացում,
- էներգաբլոկի ՕԳԳ-ի բարձրացում, որը կհանգեցնի վառելիքի տեսակարար ծախսի կրճատման,
- միջնորոգումային ժամկետի երկարաձգում, որը կավելացնի էներգաբլոկի միջին տարեկան աշխատաժամերը և արտադրանքը:
- 2015-2016թթ. Alstom ընկերությունը առաջարկել է GT13E2 MXL-ից գազատուրբինը մոդիֆիկացնել MXL2 ռեժիմով աշխատեցնելու համար, որը կապահովվի, C-48000 ԵՕՀ համարժեք աշխատաժամերով:

ԳՏՏ-ի դրվածքային հզորություն 165 ՄՎտ
Էներգաբլոկի ՕԳԳ-ի բարձրացում 1,2%:
վառելիքի տեսակարար ծախսի կրճատում 6,4 գրամ/կՎտ/ժ-ով :
ԳՏ-ի միջնորոգումային ժամկետների երկարացում, համապատասխանաբար՝
A1-12000, B-24000, A2-36000, C-48000 ԵՕՀ համարժեք աշխատաժամերով:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2018թ.-ի օգոստոսին 4-ից հոկտեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում համաձայն Պայմանագիր No. 01-SP-MXL2-NP Ջեներալ էլեկտրիկ (Շվեյցարիա) ՍՊԸ Ընկերության և «Երևանի ՋԷԿ» ՓԲ Ընկերության միջև առ 02.12.2016թ. պայմանագրի իրականացվել են գազատուրբինային տեղակայանքի արդիականացման աշխատանքները, որոնք ներառել են՝

ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ԱՇԽԱՏՈՂ ԹԻԱԿՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Գազատուրբինի I-V աստիճանի թիակները փոխարինված են մոդերնիզացված թիակներով: Տուրբինի բարձր արտադրողականության թիակներ.

- Կիրառված են նորագույն պողպատներ,
- Օպտիմալացված են կիպացումները տուրբինի ուղղորդիչ ապարատի 2-5 աստիճանների վրա,
- Օպտիմալացված են աերոդինամիկական կոնֆիգուրացիաները,
- Կիրառված է հովացման օպտիմալացված կոնֆիգուրացիա:



ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԵՆ ԿՈՄՊՐԵՍՈՐԻ ԹԻԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՒ ԿՈՆՖԻԳՈՒՐԱՑԻԱՆԵՐԸ

Փոխված և օպտիմիզացված են թիակների կոնֆիգուրացիաները, օպտիմիզացված են կիպացումները անշարժ թիակների հետ: Կիրառված են նորագույն պողպատներ և ջերմա/հրապաշտպանիչ մեկուսացնող նյութեր:

Թիակների բարելավված կառուցվածք.

Կարգավորվող դիֆուզորայնությունը,
21 աստիճանների ուղղորդող թիակները,
Կոմպրեսորի ռոտորի և իրանի թիակների նոր միջանկյալ դետալները:

ՎԵՐԱՁԻՆՎԵԼ Է ԱՅՐՄԱՆ ԽՈՒՑԸ

Կատարելագործված դիմային հատվածամասեր.
– կիպացումների բարելավում, միջհատվածամասային ճեղքերի նվազեցում:
Այրիչի կատարելագործված ինտերֆեյս՝ նվազ մաշվածությամբ.
– Հովացման օպտիմալացված կոնֆիգուրացիա:
Գոտի 1 -ի բարելավված երեսպատում.
– Բոլոր շարքերը պատված են ջերմապաշտպան շերտով,
– Հովացման օպտիմալացված կոնֆիգուրացիա:
Գոտի 2
– Երկարաձգված է ծառայության ժամկետը:



ՎԵՐԱՓՈԽՎԱԾ Է ՀԵՌԱՑՈՂ ԾԽԱԳԱՁԵՐԻ ԽՈՒՑԸ

Փոխարինված է զսպանակային հենարանը նորագույն կոնստրուկցիայով, Պահպանված են տուրբինի և կոմպրեսորի օպտիմալ բացվածքները:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի 220/110/35կՎ ենթակայանի վերակառուցման ծրագիր

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իրականացնում է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև 2015թ. ապրիլի 8-ին կնքված N՝8495-AM վարկային համաձայնագրի ներքո «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման ներդրումային ծրագիրը:

Ծրագրի նպատակը և հիմնական ուղղությունը

Ծրագրի նպատակն է բարելավել և հզորացնել ՀՀ էլեկտրահաղորդման ցանցը:

Ծրագրի հիմնական ուղղությունը, որը իրականացվում է Ընկերության կողմից, հանդիսանում է Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցումը, ներառյալ հիմնական սարքավորումների ամբողջական փոխարինում, վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում, կառավարման սենյակների համար նոր շենքի կառուցում, ՀՇԳՑ էներգաբլոկի հետ կառավարման և պաշտպանության մալուխների էստակադայի տեղափոխում և վերամիացում, նշված ենթակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման համար պահանջվող հաղորդման օդային գծերի վերամիացում, պաշտպանության և ավտոմատիկայի սարքերի միացում գործող տրանսֆորմատորային սարքերի հետ:

Ներդրումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորումները և սպասվող արդյունքների գնահատականը

Ծրագրի շրջանակներում կվերակառուցվի Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ էլեկտրական ենթակայանը, որը կառուցվել է 1962թ.: Աշխատելով ավելի քան 50 տարի, բարոյապես և ֆիզիկապես մաշվել է, ինչի արդյունքում նաև վթարների քանակը շատ բարձր է: Ենթակայանը միակ կապող օղակն է համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի և էներգահամակարգի միջև, հետևապես ենթակայանի հուսալիությամբ է պայմանավորված էներգաբլոկի անխափան աշխատանքը և արտադրված էլեկտրաէներգիայի անխափան հաղորդումը էներգահամակարգին:

Արդյունքում Ծրագրի իրականացումը նպաստելու է ենթակայանում վթարային դեպքերի նվազեցմանը և էլեկտրահաղորդման ցանցի և համակարգի հուսալիության բարելավմանը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ՝
27,863,014 $



ՎԶՄԲ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցներ՝ 22.305.514 ԱՄՆ դոլար

ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող համաֆինանսավորման գումարներ՝ 5.557.500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

* 2018թ-ին կատարվել է վարկային համաձայնագրի փոփոխություն, որի արդյունքում Երևանի ՋԷԿ-ին տրամադրվելիք վարկային միջոցները նվազեցվել են 7,9 մլն ԱՄՆ դոլարով

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում 80:20 հարաբերակցությամբ, որտեղ ծախսերի 80%-ը (ներառյալ հարկերը) կֆինանսավորվի ՎԶՄԲ-ի վարկային միջոցներից, իսկ 20%-ը (ներառյալ հարկերը)՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի շրջանակներում ՀՀ պետբյուջեից նախատեսված համաֆինանսավորման գումարներն Ընկերությանն են տրամադրվում որպես վարկ, որի մարումը նախատեսված է արտաքին աղբյուրներից ներգրավված վարկի մարմանը զուգահեռ:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

25 տարի (14,5 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝

Մասհանված գումարի դիմաց փոփոխական սպրեդ տոկոսադրույք (բազային դրույքաչափ + փոփոխական սպրեդ) 2018թ. նոյեմբերի 15-ից կազմում է 3.85%,

Չմասհանված գումարի դիմաց պարտավճար՝ 0.25% (միայն ՎԶՄԲ-ի վարկային միջոցների համար):

Վարկային միջոցների հասանելիության ժամկետը՝ 2019թ. դեկտեմբերի 31:

Ծրագրի իրականացնող թիմը.

Գլխավոր տնօրենի/Ծրագրի ղեկավարի գլխավորությամբ

Նախագծերի իրականացման բաժին

Տեխնիկական անձնակազմ - էլեկտրական արտադրամաս, նորոգումների նախապատրաստման և իրականացման բաժին՝ տեխնիկական տնօրենի գլխավորությամբ

Ֆինանսական անձնակազմ – ֆինանասա-տնտեսագիտական բաժին՝ ֆինանսական տնօրենի գլխավորությամբ,

Աջակցող թիմ – անհատ խորհրդատուներ, տեխնիկական վերահսկողության և ծրագրի իրականացման աջակցության գծով խորհրդատվական ընկերություն

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծրագրով կատարված ներդրումների գրաֆիկ ըստ տարիների և աճողական



Ծրագրի իրականացման համար կատարվել են համապատասխան գնումներ, որոնց համար նախատեսված են հետևյալ գումարները՝

Կատեգորիա ենթակատեգորիա	ՎԶՄԲ վարկային միջոցներից (ներառյալ հարկերը)		ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում (ներառյալ հարկերը)		Ընդամենը	
	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» այդ թվում՝	22 305.5	10 790 286.0	5 557.5	2 686 440.6	27 863.0	13 478 726.6
Երևանի ՋԷԿ-ի էլեկտրական ենթակայանի վերակառուցում	19 258.3	9 316 203.0	4 814.6	2 329 062.7	24 072.9	11 645 265.7
Խորհրդատվական ծառայություններ	763.6	369 391.5	190.9	92 347.9	954.5	461 739.4
Միանվագ կառավարման վճար	75. 5	36 523.1	-		75.5	36 523.1
Այլ	2 208.1	1 068 168.4	552.0	267 030.0	2 760.1	1 335 198.4

* Ծրագրով նախատեսված ծախսերը հաշվարկվել են ՀՀ ԿԲ կողմից 31.12.2018թ. սահմանած փոխարժեքով՝ 1ԱՄՆ դոլարը = 483.75 ՀՀ դրամ:

Առ 31.12.2018 թվականի դրությամբ փաստացի կատարված ծախսերը

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կատեգորիաների և բաղադրիչների անվանումները	ՎԶՄԲ վարկային միջոցներից (ներառյալ հարկերը)		ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում (ներառյալ հարկերը)		Ընդամենը	
	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
«ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	15 696.6	7 618 654.5	4 222.8	2 041 790.7	19 919.4	9 660 445.2
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	417.3	237 295.8	85.5	41 238.7	502.8	278 534.5
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	341.8	201 125.5	85.5	41 238.7	427.3	242 364.2
ՄԻԱՆՎԱԳ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐ	75.5	36 170.3	-	-	75.5	36 170.3
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	15 279.3	7 381 358.7	4 137.3	2 000 552.0	19 416.6	9 381 910.7
ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	5 655.2	2 729 994.0	1 418.4	685 881.6	7 073.6	3 415 875.6
ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	9 624.1	4 651 364.7	2 718.9	1 314 670.4	12 343.0	5 966 035.1

**կատարված վճարումները հաշվարկված են ԱՄՆ դոլարով վճարման նախորդ օրվա ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով

Ծրագրի շրջանակներում 2016թ. հուլիսի 14-ին կնքվել է գլխավոր կապալի պայմանագիր էյ-Բի-Բի էյ-Բի Սաբստեյշընս (Շվեդիա) և Կոբրա Ինստալացիոնես Ի Սերվիսիոս (Իսպանիա) կոնսորցիումի հետ 17,4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարով (առանց տեղական հարկերի և տուրքերի), որը ուժի մեջ էր մտել 2017թ. հունվարի 9-ից, որի շրջանակներում իրականացվում էր ենթակայանի վերակառուցման՝ ապրանքների մատակարարման, նախագծի կազման և շինմոնտաժային աշխատանքները:

2018Թ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵՎ ՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՈՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԹԱՓՈՎ ԸՆԹԱՑԵԼ ԵՆ ԻՆՉՊԵՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ:

2018թ.-ին մատակարարվել են Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի հիմնական սարքավորումները, այդ թվում Բուլղարիայից մատակարարվել են Հյունդայ արտադրության 220ՄՎԱ ավտոտրասֆորմատորը (116տ քաշով) և 27,5ՄՎԱ 2 տրանսֆորմատորները, Հնդկաստանից բերվել են ենթակայանի անջատիչները և բաժանիչները, Սլովենիայից և Շվեդիայից ներկրվել են կառավարման և պաշտպանության համակարգերը, Իսպանիայից՝ մետաղական կոնստրուկցիաները և պորտալները, Չեխիայից և Գերմանիայից՝ ֆիդեր/պանելները, Ավստրիայից՝ միակցիչները, Նիդեռլանդներից՝ հաղորդաձողերը, Իտալիայից՝ օժանդակ տրանսֆորմատորները, իսկ տեղակայման և մոնտաժման աշխատանքները իրականացվել են հայկական ենթակապալառուների կողմից՝ Իսպանական ընկերության գլխավորությամբ. ենթակայանը հանդիսանում է համաշխարհային արտադրության արդյունք:

2018թ. ընթացքում իրականացվել են ենթակայանի վերակառուցման շինարարական և նախագծային աշխատանքները, մատակարարվել և տեղադրվել են պայմանագրով սահմանված սարքերը և սարքավորումները: Հիմնական շինարարական, մոնտաժային և տեղակայման աշխատանքները ավարտվել են, որոնց համար թողարկվել են ավարտական հավաստագրերը:

Կատարված շինարարական և նախագծային աշխատանքների դիմաց վճարումները կազմել են 1,913,813.8 հազ. դրամ (3,959.2 հազ. ԱՄՆ դոլար):

Մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց վճարումները, ներառյալ ներմուծված ապրանքների մաքսազերծման համար վճարումները, կազմել են 4,553,157.5 հազ. դրամ (9,415.7 հազ. ԱՄՆ դոլար):

2018Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ 110ԿՎ ԱՌԱՋԻՆ ՕԴԱՅԻՆ ԳԻԾԸ ԴՐՎԵԼ Է ԼԱՐՄԱՆ:

Ենթակայանը ամբողջությամբ դրվել է լարման տակ, և սկսվել է ենթակայանի փորձարկման, գործարկման, կարգաբերման և շահագործման նախապատրաստման աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում որպես «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ծրագրի իրականացնող թիմին աջակցող խումբ, կնքվել են Պայմանագրեր անհատ խորհրդատուների հետ (ֆինանսական կառավարման գծով, գնումների գծով, բնապահպանական հարցերի գծով), որոնք 2018թ. ընթացքում մատուցել են համապատասխան խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի իրականացման աջակցության և տեխնիկական վերահսկողության համար 2017թ. հունիսի 30-ին կնքվել է խորհրդատվական ծառայությունների պայմանագիր իտալական «Չեզի և Ինչիկո» համատեղ ձեռնարկության («Ամերիա» ՓԲԸ, որպես ենթախորհրդատու) հետ: Պայմանագրի շրջանակներում իրականացվել են նախագծային աշխատանքների դիտարկման աշխատանքներ, շինարարական և էլեկտրական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև ծրագրի իրականացման հետ կապված տարաբնույթ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն:

2018թ. ընթացքում անհատ խորհրդատուներին մատուցված ծառայությունների դիմաց վճարվել է 29,694.9 հազ. դրամ (61,5 հազ. ԱՄՆ դոլար):

Ծրագրի իրականացման աջակցության և տեխնիկական վերահսկողության համար խորհրդատվական ընկերությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարվել է 139,215.3 հազ. դրամ (288.4 հազ. ԱՄՆ դոլար):

Ենթակայանի շահագործման հանձնելու գործընթացը կիրականացվի 2019 թվականի ընթացքում, որի ժամանակ կսկսվեն երաշխիքային փորձարկումները: Սահմանված ընթացակարգերով կկատարվեն անձնակազմի ուսուցման և ենթակայանի շահագործմանը նախապատրաստելու աշխատանքները, ինչպես նաև այդ ժամանակահատվածում ենթակայանը կդրվի վերջնական գործարկման: Վերջնական վճարումները կիրականացվեն շահագործման հանձնման փաստով, որից հետո կսկսվի 2 տարի երաշխիքային սպասարկման ժամանակահատվածը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2019 թվականին:

Ըստ նախնական գնահատման ծրագրի բյուջեում կառաջանա մոտ 7 մլն ԱՄՆ դոլարի խնայողություն, որից 5.6 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներից, իսկ 1.4 մլն ԱՄՆ դոլար համաֆինանսավորման միջոցներից:

06

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ-Ի ԿԱՏԱՐՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ներքո Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերկառուցման ծրագրի շրջանակներում կատարվելիք շինարարական աշխատանքները իրականացվել են ՀՀ բնապահպանական օրենսդրության և Համաշխարհային բանկի բնապահպանական միջոցառումների պահանջների համաձայն:

Դեռևս 2017թ-ի վերջին ծրագիրը ստացել էր Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական դրական եզրակացություն:

Մշակվել է Առողջության և անվտանգության, շրջակա միջավայրի (ԱԱՇ) քաղաքականությունը, համաձայն որի և տարվել է ողջ շինարարական փուլի բնապահպանական բաղադրիչը, որի իրականացմանը հետևել է ծրագրի բնապահպանական փորձագետը: ԱԱՇ կառավարման պլանը մշակվել և կիրառվել է շինարարության փուլի համար:

Աշխատանքների ընթաքում լուրջ պատահարներ չեն գրանցվել, բոլոր աշխատողները ունեցել են առողջության ապահովագրություն, ինչպես նաև իրականացվել է շինմոնտաժային ռիսկերի ապահովագրություն: Կազմակերպվել են սեմինարներ շինարարության աշխատողների համար առողջության և անվտանգության աշխատանքների վերաբերյալ:

Հանրությունը նախօրոք իրազեկվել է սպասվող շինարարության մասին շինարարության մեկնարկից առաջ: Տեղադրվել են զգուշացնող ցուցանակներ: Օգտագործվել են ցածր ձայնով սարքավորումներ, փոշեճնշող ջրի ցրում, ամենօրյա ցողում:

Մշակվել է Թափոնների կառավարման պլան, աղտոտված նյութերը համապատասխանաբար պահեստավորվել են:

Համաձայն նախագծի կառուցվել են հակահիդեհային պաշտպանիչ միջնապատեր նոր տրանսֆորմատորների միջև կամ առջև, որոնք նախատեսված են կանխելու հրդեհի տարածումը վթարային իրավիճակներում:

Նոր Ենթակայանը համալրվել է գազի արտահոսքի ավտոմատ հայտնաբերման համակարգերով, որոնք մատակարարվել են հենց արտադրողների կոմից, տեղակայվել են նաև տրանսֆորմատորների յուղորսիչ համակարգեր:

Շինարարության ավարտին արդեն մշակվել է Առողջության և անվտանգության կառավարման պլան (ԱԱԿՊ), և նախատեսվում է իրականացնել Առողջության և անվտանգության կառավարման համակարգը (ԱԱԿՀ) Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի շահագործման և տեխնիկական սպասարկման համար:

2018թ.-ի ընթացքում Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 ենթակայանի վերակառուցման ծրագրի շրջանակներում Համաշխարային Բանկի բնապահպանական փորձագետի կողմից կատարվել են բազմակի այցելություններ շինարարական հրապարակ, որոնց արդյունքում բնապահպանական տեսանկյունից ծրագրի իրականացումն արժանացել է հավանության և բարձր գնահատականի:

07 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ընկերության առջև դրված նպատակները լիովին արտացոլվում են նրա գործունեության հիմնական ուղղությունների մեջ:

- 2018թ. ընթացքում իրականացվել են Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի հիմնական և շինարարական մասի նախագծային աշխատանքները, նախագծման աշխատանքների հիմնական մասը ավարտվել և համաձայնեցվել է Գործատուի հետ: Շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում և սկսվել են ենթակայանի կարգաբերման և շահագործման նախապատրաստման աշխատանքները: Լարման տակ են դրվել 220 և 110 կՎ տրանսֆորմատորները, որոնք միացվել են էներգահամակարգին: Մատակարարվել և տեղադրվել են կապալի պայմանագրով սահմանված սարքերը և սարքավորումները, մոնտաժային և տեղակայման աշխատանքները ավարտվել են, որոնց համար թողարկվել են ավարտական հավաստագրերը:

  2019թ նախատեսվում է իրականացնել ենթակայանի երաշխիքային փորձարկումները, կարգաբերումները և գործարկումը, որի արդյունքում կիրականացվի ենթակայանի շահագործման ընդունման գործընթացը և կսկսվի թերությունների վերացման ժամանակահատվածը 2 տարի ժամկետով:

- 2018թ.-ի օգոստոսին 4-ից հոկտեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածում համաձայն No. 01-SP-MXL2-NP Ջեներալ Էլեկտրիկ (Շվեյցարիա) և «Երևանի ՋԷԿ» Փակ Բաժնետիրական Ընկերության միջև առ 02.12.2016թ. պայմանագրի իրականացվել են գազատուրբինային տեղակայանքի արդիականացման աշխատանքները, որի արդյունքում բարելավվել են հետևյալ տեխնիկատնտեսական ցուցանիշները.

  - ԳՏՏ-ի դրվածքային հզորություն 165 ՄՎտ,
  - էներգաբլոկի տեղակայված հզորություն -228.6 ՄՎտ,
  - էներգաբլոկի ՕԳԳ-ի փաստացի ավելացում 1.2% նախատեսված 1%-ի փոխարեն,
  - Ընդհանուր կայանի համար պայմանական վառելիքի տեսակարար ծախսը նվազել է 6.4 գրամ/կՎտ×ժ 5.3 գրամ/կՎտ×ժ-ի փոխարեն և այն կազմում է 251.7 գրամ/կՎտ×ժ:

- Ընկերությունը նաև ձեռնարկում է միջոցներ բացահայտելու ընկերության ունեցած կադրերի, նրանց աշխատանքի մոտիվացիայի պայմանների համապատասխանությունն իր կողմից նախանշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պահանջներին, միաժամանակ, Ընկերության համար որպես միջնաժամկետ ցուցանիշ է համարվում անձնակազմի սոցիալական գործունեության զարգացումը, աշխատողների պատրաստման, ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպումը, երիտասարդ մասնագետների ներգրավումը, այսինքն՝ նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական ավելացումը:

- 2019թ.-ի ընթացքում Ընկերությունը սեփական միջոցների հաշվին պլանավորում է ՀԾԿՀ հաստատմանը ներկայացնել և իրականացնել ներդրումային ծրագիր 420,716 հազ. դրամի, որով նախատեսվում է կատարել հետևյալ ձեռքբերումները ՀՀ օրենսդրության համաձայն.
  - Ազոտաթթվածնային կայանի ձեռքբերում,
  - ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի գազի կոմպրեսորների մուտքի գազազտման հանգույցի նախագծման, ձեռքբերման և շինմոնտաժման աշխատանքներ,
  - Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում,
  - Համակարգչային աքսեսուարների ձեռքբերում,
  - Գրասենյակային և տնտեսական գույքի ձեռքբերում,
  - Խմելու ջրի Dy 500 մմ տրամագծով ստորգետնյա մետաղական խողովակաշարի վերակառուցում և տեխնիկական ու որակի հսկողության ծառայություն:

Բիզնես ծրագրերի ներդրման արդյունքում Ընկերությունը ապահովել է շահույթ և լիկվիդայնության շարունակական վերահսկում:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0053, Արին-բերդի 3 նրբ.3
Հեռ. +374 11 472 760
+374 11 430 340
E-mail: mailbox@ytpc.am
ՀՎՀՀ 02205028

Գլխավոր տնօրեն
Խաչատրյան Սասուն Սաշայի
հեռ. +374 11 47 27 60

Դիզայնը՝ ԴՈՄԻՆՈ Փրոդաքշնի